# ՋՈՒԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

Ի ՊԷՏՍ

ՋԱՒԱՅԻ ՀԱՅ ՄԱՆԿԱՆՑ

---

ՅՕՐԻՆԵՑ

Յ. ՏԷՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Ի ՍՈՒՐԱԲԱՅԱ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

Մ. ԵՒ Յ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԲԱԹԱՒԻՈՅ

ՎԷՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒ[illegible]ՂԱԶԱՐՈՒ

19[illegible]

Mae Hacobian
5/94 Bimiga Road
Bellevue Hill NSW 2023

# ԶՈՒԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

Ի ՊԷՏՍ

## ՋԱՒԱՅԻ ՀԱՅ ՄԱՆԿԱՆՑ

ՅՕՐԻՆԵՑ

Յ. ՏԷՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Ի ՍՈՒՐԱԲԱՅԱ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽՒՔ

Մ. ԵՒ Յ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԲԱԹԱՒԻՈՅ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ

1906

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այսպէս զուարճալի պատմութիւնների օգուտն երեք են․ առաջինն որ երեխաների հետաքրքրութիւնն գրգռում եւ ընթերցասիրութեան է վարժեցնում․ երկրորդն՝ պատմութեան բարոյականն մանկանց բարքի վերայ ազդում է, իսկ երրորդն՝ բազմաթիւ հայ բառերի եւ ոճերի նշանակութիւնն Ջաւա ծնուած հայ երեխայն կը սովորի Հոլլանդերէնի թարգմանութիւնով։

Բաղձացած եւ աւելի օգուտներ ունենալ է փափագում, եւ այդով իւրն վարձատրուած համարում։

ՑՕՐԻՆՈՂՆ

2691
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ԹԱՆԳԱՐԱՆ
ԲԱՆԿԱՐԱՆ

## 1. ԳՈՂ ԵՒ ՇՈՒՆ

Մի Գող մի գիշեր ջանանում էր մի տան մէջ մտնել, և տան զատերն գողանալ, բայց պահապան[1] շունն չէր թողնում, անդադար[2] վայում էր։ Գողն մի կտոր հաց էր նշանց տալման շանն, կարծելով թէ այդ հացով կարող է շանն խաբել և ձայնն–կտրել–տալ[3]։ Բայց շունն հացն մերժելով[4] ասեց գողին։ «Ա՜յ չարագործ[5], ես գուցէ խաբուէի և քո տուած հացն յինքառնէի եթէ որ չիմանայի ինչ մտքով[6] ես տալման. գնա՛ կորի՛ր էստեղից, քանզի որոք բան չէ կարող իմ հաւատարմութիւն[7] կորցնել»։

Բարոյականն[8]. Այս օրինակ է հաւատարիմ ծառայի,

1. wacht. 2. onophoudelijk. 3. doen zwijgen. 4. weigerende. 5. O! je booswicht. 6. bedoeling. 7. getrouwheid. 8. zedenleer.

## 2. ՀԱՒ ԵՒ ԿԱՏՈՒ

Մի հաւ միանգամ անզգուշութեամբ մի թռնաւոր[1] կենդանի կերաւ և հիւանդացաւ։ Երբոր թեւերն կախ գձած գնում էր, մի կատու մօտկացաւ նորան և մի քաղաքավար ձէնով ասեց. «Բարեկա՛մ, քո առողջանալոյ համար մի դեղ չըգտա՞ր.» «Այո՛», ասեց հաւն, «մի շատ յարմար[2] և լաւ ճար գտայ՝ որ դու միայն կարող ես անել». «Ի՞նչ է դեղդ,

սիրելի». հարցրեց կատուն: Հաւն պատասխանեց, «այդ դեղն է որ դու ինձնից հեռանաս [3], այնչափ հեռի որչափ կարելի է»:

Բարոյական. Այս օրինակ է կեղծաւոր մարդկան, որ անոյշ [4] լեզուով մօտկանում են և խորհուրդ են տալման [5] որ մի կերպ ուրշին յափշտակեն [6] կամ վնաս տան. բայց մեք պէտք է այսպէս մարդկանցից զգուշանանք և հեռի [7] մնանք:

1. vergiftig. 2. geschikt. 3. zich verwijderen. 4. Zoet. 5. raad geven. 6. buitmaken, rooven. 7. ver.

## 3. ԵՐԿՈՒ ԳՈՐՏՔ [1]

Երկու Գորտք միմեանց [2] դրացի [3] էին, մին ապրում էր մի լճի [4] մէջ ապահով [5] և աղքատ. միւսն ապրում էր մի փոքր ջրի մէջ ճանապարհի վերայ, բայց հարուստ: Գորտն՝ որ լճին մէջ էր, շատ անգամ խրատում էր ընկերին որ գայ իւր մօտ ապահով ապրի և դուրսն վտանգի մէջ չընկանի. բայց միւսն երբէք չէր լսում նորան, ասելով թէ. «ես էստեղ շատ կերակուր եմ գտանում»: Բայց նա շատ զղջաց [6] երբոր մի սայլ [7] նորա վերնով [8] անցկացաւ և տրորեց [9], որ իւր մեռնելոյ ժամանակում ասեց. «Ինչ անխելքութիւն է որ շատ ուտելոյ համար իմ կեանքն կարճացրի. եթէ իմ ընկերի խօսքին լսած ելնէի, այժմ ես չէի մեռնել:

Բարոյական. Այս օրինակ է շատ մարդկան, որ՝ շատ փափագելով [10] և փոքրին բաւարար չելնելով, կորել են [11]:

1. kikvorsch. 2. elkanders. 3. buur. 4. meer. 5. veilig. 6. berouwde. 7. kar. 8. over. 9. verpletterde. 10. verlangen. 11. te niet gaan.



## 4. ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Գայլն և Գառնն մի առուից [1] ջուր էին խմում, բայց գայլն շատ դավեր էր քանթէ Գառնն, և մի պատճառի յետնայ էր մանգոլման [2] որ մի կերպով գառնին յափշտակի: Վասնորոյ երբ տեսաւ նորան, վազեց մօտն և սկսեց մեղադրել [3], թէ, «ինչո՞ւ համար ես իմ ջուրն պղտորում [4]». Գառնն դողալով [5] պատասխանեց. «Ես էս քաշիցն եմ խմում, ինչպէս եմ կարող պղտորել, հաւատա՛. մաքովս եւս չէ անցկացել [6] քեզ որոք վնաս տամ»: Գայլն կրկնեց [7] թէ «Երէկ տեսայ հայրդ շներին յորդորում էր [8] որ ինձ հալածեն [9]»: Գառնն ասեց, «մի ամիս յաւել է որ մսագործն [10] իմ հօրն մորթեց [11]»: «Ուրեմն [12] մայրդ էր» ասեց գազանն [13]: «Ո՛չ եւս իմ մայրն կենդանին է», պատասխանեց գառնն. «այլ ինձ ծնելոյ ժամանակն մեռաւ»: Բայց գայլն ատամներն [14] կրճտելով [15] ասեց. «մեռաւ կամ չմեռաւ չգիտեմ, բայց լաւ գիտեմ որ դու և քո ազգն ինձ ատում էք [16]. վասն որոյ ես պէտքէ վրէժխնդիր ելնեմ [17]»: Այս ասելով գայլն թռաւ խեղճ գառին վերայ, պատառեց նորան և կերաւ:

1. beek. 2. naar een reden zoeken. 3. beschuldigen. 4. troebel maken. 5. bevend. 6. niet eens eraan gedacht. 7. hernam. 8. aan hitsen. 9. verjagen. 10. slager. 11. slachten. 12 dan. 13. woest dier. 14. tanden. 15. knarsend. 16. haten. 17. zich wreken.

## 5. ԱՔԱՂԱՂ[1] ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ[2]

Մի աքաղաղ աղբանոցն[3] փորելոյ ժամանակումն յանկարծ մի մարգարիտ գտաւ, դէն գձէց և այսպէս ասեց. « Եթէ մի մարգարիտ—ծախող այս բաղդին հանդիպէր[4] փառք կ՚տէր[5] Աստուծոյ. բայց ինձ մօտ էդ էնպէս մի բան չէ, և ես շատ յաւել երջանիկ[6] կ՚ըլնէի՝ եթէ էդ մարգարտի տեղ մի հատ գարի[7] գտանէի »:

Բարոյականն. Այս օրինակ է տգէտ մարդկանց, որ գիտութիւն[8] կամ գիտուն մարդ չեն սիրում:

1. Haan. 2. paarl. 3. mesthoop. 4. aantreffen. 5. dankzeggen. 6. gelukkig. 7. gerst. 8. geleerdheid.

## 6. ԿԱՊԻԿ[1] ԵՒ ԿԱՏՈՒ

Մի կապիկ և մի կատու կրակի մօտ նստած մտածում էին թէ ինչպէս կարող են կրակի միջի շագանակներն[2], որ խորովման[3] էին, վերառնել: « Եղբայր », ասեց կապիկն կատուին « այս շագանակներն, որ տեսնում ես, շատ հեշտ կերպում կարող ենք վերառնել, և քո թաթիկներն[4] յաւել յարմար են քանթէ իմս, վասն որոյ դու միայն մոխրից[5] դուրս քաշիր, ես այստեղ վեր կ՚առնեմ »: Այս հնարքն[6] ընդունեց[7] կատուն, և յառաջն կրակներն յետ քաշեց, յետոյ մոխիրն. յետոյ թաթիկներն տանելով և բերելով մի քանի հատ կրակի միջից հանեց: Կատուի թաթիկներն տաքութիւնից այրում էին[8], բայց կապիկն հանգիստ[9] նստած ուտում էր: Մի ծառայ յանկարծ եկաւ ներս և տեսաւ, կապիկն շուտով փախաւ, բայց բոլոր պատիժն կատուն կրեց[10]:



1. aap. 2. kastanjes. 3. braden. 4. pooten. 5. asch. 6. middel; uitvinding. 7. aannemen. 8. branden. 9. rustig; lekkertjes. 10. ondèrgaan.

## 7. ԿԱՌԱՎԱՐ[1] ԵՒ ԻՒՐ ՏԷՐ

Մի վաճառական մի անգամ ճանապարհորդութիւն էր անում[2] Տաճկաստանում[3] առեւտրի[4] համար: Ճանապարհին նա հասաւ մի անտառի[5] մէջ, և այստեղ նորա կառավարն, որ եւս նորա ծառայն էր, ստիպեց[6] նորան՝ որ իւր սանդղների[7] բլանիքներն նորան տայ, և շորերն եւս իւրին հետ փոխի: Յետոյ ծառայն նստաւ կառքին մէջ և ստիպեց պարոնին որ կառքն քշի: Երբ սոքա քաղաքն հասան, վաճառականն գնաց դատաւորին[8] մօտ, (որ էդտեղ կոչում են Կադի), և գանգատեց: Այժմ[9] երկուքն եւս ասում էին: « Ես եմ տէրն, ես եմ պարոնն »: Կադին՝ տեսնելով թէ վկայք[10] չկան, չկարողացաւ իմանալ ո՛րն էր ուղիղ: Վերջումն ասեց, « գնացէ՛ք դուրս »: Երբ նոքա դուրս էին գնում, Կադին յանկարծ կանչեց. « Կառավար, կրկին ե՛կ ինձ մօտ »: Էն իսկ[11] կառավարն լսեց և յետ դարձաւ: Այժմ Կադին ասէց. « դու ինքնդ ես իսկ կառավարն և ոչ թէ Պարոն ես». Յետոյ հրամայեց նորան իսկոյն տանեն բանդն[12]:

Բարոյականն. Այս օրինակ է թէ ամենայն զրրկող[13] իւր պատիժն շուտ կամ յետի[14] հաստատ կգտանի:

1. koetsier. 2. reisde. 3. In Turkeij. 4. Zaken ; handel. 5. bosch. 6. dwingen. 7. Koffers, kisten. 8. rechter. 9. nu. 10. getuigen. 11. ware. 12. gevangenis. 13. beroover. 14. vroeg of laat.

## 8. ԱՐԾԻՒ [1] ԵՒ ԱԳՌԱՒ

*Մի արծիւ մի անգամ օդից քաշացաւ [2] մի ոչխարի վերայ և վերառեց նորան տարաւ։ Մի ագռաւ՝ որ այս տեսաւ, իւրնում [3] ասեց։ «Միթէ [4] ես եւս չեմ կարող այդպէս–մի–բան [5] անել»։ Այս ասելով, նա թռաւ մի գէր ոչխարի վերայ. բայց... չկարողացաւ անել որպէս արծիւն էր արել. վասն զի [6] ճանկերն այնպէս փաթաթուեցին [7] ոչխարի բրդին, որ չկարողացաւ ազատուել [8] և այդպէս ոչխարին վերայ մնաց։ Երբոր նա կրկին ջանանում էր ազատուիլ, հովիւն [9] տեսաւ նորան, վազեց եկաւ բռնեց և դրեց նորան վանդակի [10] մէջ, և տուեց իւր որդւոյն որ խաղայ։*

*Բարոյականն. Այս լաւ օրինակ է մի յանդուգն [11] և վստահ [12] մանկան [13] համար, որ, ինչ ո՛ր տեսնում է նա, կարծում է թէ ինքն եւս կարող է անել, մինչեւ նա մի վտանգի [14] մէջ է ընկանում։*

1. arend. 2. dalen. 3. bij zich zelve. 4. Is 't mogelijk dat. 5. zooiets. 6. want. 7. gewikkeld zijn. 8. wegkomen. 9. herder. 10. kooi. 11, brutaal. 12. stout. 13. kind. 14. gevaar.



## 9. ՊԱՅՏԱՌԻ [1] ՇՈՒՆ

*Մի պայտառի շուն սովորութիւն ունէր որ միշտ սալի [2] մօտ կըշտու կ՚ընկանէր և կքնէր. Թէպէտ [3] պայտառն շատ անգամ երկաթ [4] կ՚ծեծէր [5] այդ սալի վերայ, բայց շունն երբէք չէր զարթնել. և ընդհակառակն [6] երբոր պայտառն գործն մի փոքր ժամանակ կ՚թողնէր և կ՚գնէր կերակուր ուտելոյ, սեղանի ձէնից շունն իսկոյն կ՚զարթնէր և կ՚վազէր սեղանի մօտ որ կերակուր գտանէր։*

*Բարոյականն. Այս օրինակ է ծոյլ մարդկան որ բանի կալ [7] չեն սիրել, բայց կերակրի ժամանակ էնպէս ժիր [8] են. որ ուրշի համար զատ չեն թողնել։*

1. hoefsmid. 2. aanbeeld. 3, ofschoon. 4. ijzer. 5. slaan. 6. daarentegen. 7. werken. 8. vlijtig.

## 10. ԵԶԻՆՔ [1] ԵՒ ԼՈՒԾ [2]։

*Երկու եզեր լծած [3] էին մի խիստ բարձած [4] սայլի [5] և շատ դժուարութեամբ կարողանում էին քաշել. բայց լուծն էնպէս սաստիկ [6] ձէն էր հանում [7], որ եզերն ձէնից վախեցան և մնացին։ Յետ դարձա՛ն լուծին ասեցին «Ո՛վ անհանդարտ [8], ինչո՞ւ համար ես էդպէս պոռում [9] դու գրեթէ [10] որոք դժուարութիւն չունես, մեք որ այսչափ ծանր բեռն [11] քաշելով վաստակում ենք, մի ձէն չենք հանում»։*

*Բարոյականն. Այս օրինակ է համբերող [12] մարդոյ, որ որքան ծանր բեռնի տակ ելնի, որոք ձէն չի հանել, այլ համբերութեամբ [13] կ՚սպասի մինչեւ իւր բեռն թեթեւանայ։*

1. ossen. 2. juk. 3. in gespannen. 4. geladen. 5. kar. 6. vreeselijk. 7. geluid maken, leven maken. 8. onrustige. 9. screeuwen. 10. haast. 11. last. 12. geduldig. 13. met geduld.

## 11․ ԾԱՐԱՒ ԱԳՌԱՒ

*Մի ագռաւ՝ երբ միանգամ խիստ ծարաւել էր․ մի աման[1] գտաւ որոյ յատակում[2] փոքր ջուր կայր, բայց չկարողացաւ խմել, քանզի ամանի վիզն[3] ձիգ էր և նեղ․ հետևապէս[4] կտուցն[5] չէր հասանում ջրերին։ Այս դժուարութեան ճարն[6] գտանել անկարելի[7] էր արևման[8] բայց որովհետև[9] սաստիկ ծարաւ էր, ծարաւն կոտրելոյ[10] հարկն[11] սովորացրեց նորան որ մի ճար գտանի։ Վասն որոյ[12] նա շատ մանր[13] քարեր ժողովեց և մի մին կոլցով բերեց գձեց ամանին մէջ։ Այս կերպով ջուրն կամաց – կամաց[14] բարձրացաւ, վերջումն այնչափ բարձր մինչև ագռաւն կարողացաւ հեշտութեամբ խմել։*

*Բարոյական․ Հարկաւորութիւնն[15] մարդոյ միտք սրելով, շատ բան գտանել և շատ արուեստներ[16] հնարել[17] կ'տայ[18]։*

1. kom. 2. bodem. 3. hals. 4. by gevolg. 5. bek. 6. middel. 7. onmogelyk. 8. scheen. 9. daar. 10. dorst lesschen. 11. nood. 12. dus. 13. klein; nietig. 14. langzamerhand. 15. behoefte. 16. kunst. 17. uitvinden. 18. zal doen.



## 12․ ԷՇ ԵՒ ԻՒՐ ՏԷՐ

*Միանգամ մի էշ առիւծի կաշի հագաւ և ջրաղացից[1] դուրս գնաց։ Նա սկսեց մի անտառից[2] միւսն պտտել այնպէս այլակերպ[3] որ ամէն կենդանիք վախենում էին․ ում որ արևման էր մտածում էին « էս ինչ տեսակ[4] կենդանի է »․ վասն որոյ մի զարհուրելի[5] բան արևալով նոցա, շուտով դողալով փախնում էին։ Մինչ անգամ[6] առիւծներն փախնում էին։*

*Նորա տէրն, ջրաղացպանն[7], երբ նա իշոյ յետնէն ման էր գալիս[8], և հանդիպեց նորան, իսկոյն կարծեց թէ իսկապէս[9] առիւծ է նա և շատ վախեցաւ․ բայց երբոր մի փոքր մօտկացաւ և տեսաւ իշոյ ականջի ծայրն, որ դուրս էր, նորա խաբէութիւնն[10] հասկացաւ։*

*Այդ ժամանակն իսկոյն վերայ վազեց[11] և առանց խնայելոյ[12], փէտով մի լաւ թակեց և քաշեց իւր հետ տարաւ ջրաղացն։*

*Բարոյական․ Այս օրինակ է անխելք և ծոյլ մարդկան։*

1. molen. 2. bosch. 3. vervormd. 4. wat is dat voor. 5. verschrikkelÿk. 6. tot zelfs. 7. molenaar. 8. zocht naar. 9. werkeyk. 10. bedrog. 11. op 't lÿf vallen, aanvallen. 12. zonder te sparen.

## 13. ՕՁ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ[1]

Մի խեցգետին մի օձի հետ ընկերացաւ, և միասին գնալոյ ժամանակն տեսաւ թէ օձն ուզում է բոլորին չարութիւն[2] անել և կծել։ Յետոյ կասկածելով[3] նորանից՝ միշտ խրատում էր նորան որ իւր խորամանկութիւն[4] թողնի և իւր նման պարզամիտ[5] ելնի. բայց օձն ամենևին չէր լսում։ Վասն որոյ մի օր խեցգետինն տեսաւ թէ օձն քնած է՝ ճանկերով բռնէց նորան այնպէս խուփ տուէց[6] մինչև մեռցրէց, և յետոյ ձգելով[7] մեկնէց[8] և սկսէց մեռած օձին հետ խօսել։ «Եթէ» ասէց նա. «դու յառաջ այսպէս մեկն և պարզ ելնէիր՝ այժմ այսպէս պատժով չէիր մեկնուել։ Որովհետև ուզում եմ որ իմ ընկերս մեկն ելնի, վասն որոյ պարտաւորուեցի[9] որ քեզ ես մեկնեմ»։

Բարոյականն. Այս օրինակ է թէ չարութիւն սիրողն միշտ իւր պատիժն կ՚գտանի։

1. krab; (zeekreeft). 2. kwaad. 3. wantrouwen. 4. listigheid. 5. rondborstig. 6. knypen; drukken. 7. uitstrekken. 8. recht maken. 9. ik was genoodzaakt.

## 14. ԱՌՒԻԾ, ԷՇ ԵՒ ԱՔԱՂԱՂ[1]

Ասում են[2] թէ առիւծն աքաղաղի ձայնից կվախենայ[3]։ Մի օր երբոր մի աքաղաղ սկսէց երգել՝ մի առիւծ անցէր կենում այդտեղով[4]. առիւծն այդ ձայնից էնպէս սաստիկ վախեցաւ, որ շուտով փախաւ. այդ ժամանակում մի էշ տեսաւ սորա փախնելն[5]։ Անխելք էշն կարծէց թէ առիւծն իւրնից է վախենում և փախնում, և սկսէց յետնէն վազել։



Բայց առիւծն աքաղաղի ձայնն էլ չլսելով, յանկարծ յետ դարձաւ բռնէց իշին և սկսէց պատառել[6]։ Իսկ[7] էշն մեռնելոյ ժամանակ սկսէց պոռալ. «Վա՜յ ինձ», ասէց, «ես ինչ անխելքութիւն[8] արի, փոխանակ[9] դէպ տուն[10] փախնելոյ, յիմարութեամբ[11] վազեցի իմ մահի յետնէն[12]»։

1. haan. 2. men zegt. 3. is bany. 4. daarlangs. 5. vlucht. 6. verscheuren. 7. doch. 8. dwaasheid. 9. in plaats von, – 10. huiswaarts. – 11. met zotheid- met onnoozelhen. 12. achtirno.

## 15. ՃՊՈՒՌՆ[1] ԵՒ ՄՐՋԻՒՆ[2]։

Ճպուռն բոլոր ամառան[3] մէջ որոք բան չէր մտածում, միայն ձայնովն զուարճանում էր[4]. և ձմեռան մօտ էնպէս մեծ նեղութեան[5] մէջ էր որ ոչինչ ունէր ուտելոյ։ Վասն որոյ նա գնաց մրջիւնին աղաչէց[6] որ իւրն մի փոքր ցորէն[7] պարտք տայ[8] քանզի որոք կերակուր չունէր։ Մրջիւնն պատասխանէց. «Շատ վատ բան ես արէլ, ինչո՞ւ համար ինձ նման ամառան մէջ չես աշխատէլ[9] և համբարներն[10] լցէլ, բա՛[11] դուք ինչ էք անում ամառան գեղեցիկ[12] եղանակին մէջ»։ «Գիշեր և ցերէկ[13] երգում էի[14]» ասէց ճպուռնն։ Յետոյ մրջիւնն ծաղր անելով,[15] ասէց «իրաւ է[16] որ դուք ուրիշ լաւ բան չէք կարող մտածել՝ բայց միայն ուրախանալ. ուրեմն[17] ինչպէս որ տարին սկսեցիր երգելով, տարւոյ մնացեալն[18] ես գնա՛ պարգոլով անցկացրուր»։

Բարոյականն. Այս օրինակ է այն ծոյլ և շատախօս մարդկան[19] որ իւրէնց ժամանակ փճացնում են և ապագայն[20] չեն մտածում։

1. sprinkhaan. 2. mier. 3. zomer. 4. zich vermaken. 5. nood. 6. smeeken. 7. tarwe. 8. uit leenen. 9. arbeiden. 10. schuur. 11. toch. 12. heerlyk. 13. dag. 14. zingen. 15. spottende. 16. waarlyk. 17. derhalve. 18. het overige. des jaars. 19. babbelaar. 20. de toekomst.

## 16. ԵՐԿՈՒ ՄԱՐԴԻԿ ԵՒ ԷՇ

*Մի օր մի էշ մոլորած [1] գնում էր, երկու մարդիկ գտան սորան և սկսեցին վիճաբանել [2] միմեանց [3] հետ թէ էշն ումն կ'ելնի [4]. երբոր սոքա ջանանում էին միմեանցից յափշտակել [5], ասեցին թէ՝ ո՛վ որ յաւել զօրաւոր [6] է թո՛ղ նա վերառնի: Յետոյ սոքա սկսեցին միմեանց հետ կռուել, բայց շատ անխելքութիւն արին, քանզի երբոր նոքա միմեանց գիտինն էին տալիս [7] էշն դուրս ելաւ [8] նոցա ձեռնից և փախաւ, յետոյ այս երկու կռուողներն [9] կրկին հաշտեցին միմեանց հետ:*

*Բարոյական. Այս օրինակ է կռուարար [10] մարդկան, որ մի բանի վերայ այնչափ հակառակութիւն են անում [11], մինչև ինչ որ ունեն կորցնում են և յետոյ հաշտւում են [12] միմեանց հետ:*

1. verdwaald. 2. twisten; redetwisten. elkander. 4. van wien zal zyn. 5. betrooven, 6. sterker. 7. tenonder brengen; overwinnaar zyn. – 8. uitglippen. 9. vechters. 10. twistziek, ruzie-zoekend. 11. tegenstryden. 12. verzoenen.



## 17. ՀԵՐՄԷՍ [1] ԵՒ ՓԱՅՏԱՀԱՏ [2]

*Մի փայտ կտրող իւր ուրագ կորցրէց, և որովհետև այդով իւր հացը աշխատում էր [3], խեղճ մարդն սկսէց յուսահատ կերպում [4] Հերմէս չաստուածին աղաչել:*

*Հերմէս խղճալով [5] նորան, մի արծաթէ ուրագ ձեռնումն արևաց նորան և հարցրէց. «Այս է քո կորցրած ուրագն». «Ո՛չ». պատասխանէց մարդն իսկոյն:*

*Կրկին չաստուածն նորան մի ոսկիէ ուրագ նշանց տալով հարցրէց. «Այս է՞ գուցէ քո ուրագն». «Այդ ևս չէ», պատասխանէց մարդն: Յետոյ չաստուածն նորան նորա իսկ արկաթէ ուրագն նշանց տուէց: փայտ կտրողն իսկոյն վայէց «այո՛, այդ է որ ես ճարում էի, և սորա համար էի միայն ես քեզ աղաչում»: «Ինքա՛ռ», ասէց չաստուածն, «և քո բարի հաւատքի [6] և ճշմարիտ խօսելոյ համար ինքա՛ռ միւս երկուքն ևս»:*

*Այսպէս ասելով ստիպէց [7] նորան երեքն ևս ինք առնի և գնայ:*

*Բարոյական. Այս մի շատ լաւ օրինակ է թէ ճշմարիտ խօսողն [8] միշտ բարի կ'գտանի և չար և սուտ խօսողն միշտ կպատժուի և քաշ մարդ կհամարուի [9]:*

1. Mercury (afgod). 2. houtkakker. 3. verdienen met arbeid. 4. radeloos. 5. medelyden hebben met. 6. eerlykheid. 7. dwingen. 8. die waarheid spreekt. 9. beschouwd worden.

2691

ԳՐԱԴԱՐԱՆ
ԶՕՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՊԱՏՄԱԿԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ

## 18. ՄՐՋԻՒՆ ԵՒ ԱՂԱՒՆԻ [1]

Մի մրջիւն անզգուշութեամբ ընկաւ մի փոքրիկ գետի մէջ։ Երբոր մօտիկ էր որ խեղդուէր՝ մի աղաւնի նորան տեսաւ ծառիցն, և մի փոքրիկ ճիւղ [2] գըձէց ջրին մէջ. և այս ճիւղն եղաւ որպէս մի փոքրիկ նաւ մրջիւնին համար, և նորանով մրջիւնն փրկուեց [3]։

Երբոր մրջիւնն ցամաք [4] հասաւ տեսաւ որ մի որսորդ [5] աղեղն [6] լարել էր [7] և ականում էր աղաւնւոյն։ Երբոր որսորդն պէտք էր նետն [8] գձէր, մրջիւնն հասկացաւ իւր բարերարի [9] վնասն [10], շուտով վազեց և որսորդի ոտն կծեց։ Որսորդն դիրուր գոլով [11] ձէն հանեց, աղաւնին իմացաւ և թռաւ։

Եւ այսպէս մրջիւնն, որ իւր կեանքն պարտական [12] էր աղաւնւոյն, նորանն ևս փոխարէն [13] փըրկեց, և այս կերպ [14] նորա բարերարութիւն [15] յետ հատուցրեց [16]։

*Բարոյական.* Այս օրինակ է թէ ամենայն մարդ պարտական է բարերարութիւն բարերարութիւնով փոխարինել [17]։

1. Duif. 2. takje. 3. was gered. 4. droog land; val. 5. jager. 6. boog. 7. gespannen had. 8. pyl. 9. weldoener. 10. nadeel, verlies. 11. bewegen. 12. verschuldigd. 13. in de plaats. 14. op deze wyze. 15. weldaad. 16 betalen. 17. vergelden.



## 19. ՃՆՃՂՈՒԿՔ [1]

Հենրիկոս [2] մի փոքրիկ սանդղով [3] վերելաւ մի կեռասի [4] ծառ՝ որ մի քանի հատ գեղեցիկ կարմիր կեռասներ քաղի [5]։ Նա տեսաւ որ ճնճղուկներն մի քանի կեռասներ կերել էին, մինչև կուտն [6] էր մնացել։ Այս մասին [7] շատ տխրեց [8], գնաց իւր հօր մօտ և ասեց. «Հայր, այդ անիծեալ [9] ճնճղուկներ մեր կեռասի ծառն փճացրել են. մեք ևս պէտք է նոցա հրացանով [10] սպանենք որ մին ևս կենդանի չմնայ»։ Բայց [11] հայրն պատասխանեց. «Այդ անխելք [12] և անիրաւ [13] բան կ'ելնի, եթէ մեք բոլոր ճնճղուկներն սատկացնենք՝ գուցէ միւս տարումն մի հատ՝ կեռաս ևս չտեսնենք ծառին վերայ. քանզի ճնճղուկներն բռնում են և ուտում են թրթուրներն [14], որ ուզումեն տերևներն և ծաղկներն ուտել-վերջ տալ [15]։ Վասն որոյ, մեր երախտագիտութիւն [16] ճանաչելոյ համար, պարտաւոր [17] ենք այդ քաղցած [18] թռչնոցն մի քանի հատ կեռասներ շնորհել [19]»։

Երբեմն պարտիմք [20] փոքր ինչ վնաս կրել,
Մեծագոյն [21] կորուստ [22] առ ի խափանել [23]։

1. Musschen. 2. Hendrik. 3. met ladder. 4. kers. 5. plukken. 6. put. 7. hierover. 8. bedroefd zyn. 9. verwenschte. 10. met gewer. 11. echter. 12. onverstandig. 13. wrsed. 14. rupsen. 15. opeten. 16. dankbaarheid. 17. genoodzaakt. 18. hongerig. 19. gunnen. 20. wy moeten. 21. veel grootere. 22. verlies. 23. omte voorkomen, vermyden.

## 20. ԷՇ ԵՒ ՇՈՒՆ

Մի էշ և մի շուն ընկերացած[1] միասին գնում էին, և իշոյ վերայ հաց կայր բարձած, որ նա տանում էր աղքատաց համար: Մոքա ճանապարհումն ղուզնացան, էշն սկսեց խոտ ուտել, և շունն իշոյն աղաչում էր որ իւրն մի փոքր հաց տայ, բայց էշն շանն ծաղր անելով[2] ասումէ « խոտ կե՛ր իմ հետ »: փոքր ժամանակից յետ յանկարծ տեսան որ մի գայլ էր գալիս: Էշն սկսեց շանն աղաչել և ասել « Շուն եղբայր, կ'աղաչեմ ինձ օգնես, գայլին հալածես[3] որ ինձ չպատառի[4], գիտեմ որ դու կարողես այս շնորհը ինձ անել[5] »:

Շունն պատասխան տուեց թէ ». փոքր ժամանակով յառաջ մի կտոր հաց չ'տուիր ինձ, այժմ[6] ինձնից օգնութիւն ե՞ս ուզում. գնա՛ կորի՛ր[7], քեզ նման ընկեր ես չեմ ուզում, որ կարօտութեան[8] ժամանակ որոք օգուտ[9] չունի: Եւ այսպէս ասելով թողեց որ գայլն նորան պատառի:

Բարոյական. Այս օրինակ է մի վատ բարեկամի:

1. als vrienden. 2. spottend. 3. verjagen. 4. verscheuren. 5. gunst bewyzen. 6. nu. 7. ga weg. 8. nood. 9. nut, voordeel.

## 21. ՑՈՒԼ[1] ԵՒ ՄՈՒԿՆ

Մի ցուլ խոտի վերայ կըշտու էր և մտածում էր իւր ուժի[2] վերայ: Ասում էր իւրնում ». Թո՛ղ փիղն[3] և առիւծն չէլնեն, յիրաւի[4] բոլոր կենդանեաց մէջ



ես ողջի-զօրաւորն[5] եմ. թողեալ[6] այս երկուքն, ոռոք մի ուրիշ կենդանուց ես չեմ վախենում »:

Երբ նա այսպէս հպարտանում էր[7], մի մուկն իւր ծակից դուրս եկաւ, և ցուլի ոտն կծեց, և կըրկին փախաւ մտաւ իւր ծակն: Այդ ժամանակն ցուլըն այնքան սաստիկ ցաւ զգաց[8], մինչև սկսեց պոռալ[9] վասն որոյ՝ տեսնելով թէ մի մուկն ևս կարող է իւրն վնաս տալ[10], միտքն փոխեց[11], և ինքն իւրն դրեց վախլուկ[12] կենդանեաց կարգին մէջ:

Բարոյական, Այս օրինակ է ինքնահաւան[13] մարդոյ:

1. Stier. 2. kracht. 3. inderdaad. 4. zeker. 5. de sterkste. 6 uitgezonderd. 7. trotsch zyn. 8. gevoelde. 9. brullen. 10. benadeelen kwaad doen. 11. in andere gedachten komen. 12. vreesachtig, bang. 13. verwaand; ingebeeld.

## 22. ԱԳՌԱՒ[1] ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Ագռաւն մի օր իւրն զարդարեց[2] փետուրներով[3], որ նա ժողովէլ էր զանազան[4] թռչունների բուներից, և եկաւ նոցա մէջ[5] որ փառաւորուի[6]: Եւ թէպէտ[7] թռչուններն սկզբումն զարմացան[8] նորա գոյնզգոյն[9] փետուրների վերայ, բայց երբ մօտկացան ականեցին և հասկացան նորա խորամանկութիւն[10], բոլորն ևս բարկացած իսկոյն վազեցին նորա վերայ, և այնքան կտըցով տուին[11] մինչև ոչ միայն իւրեանց փետուրներն, այլ և[12] նորանն ևս դուրս տուին[13]: Բայց ագռաւն այսպէս փետուրներն դուրս տուած շատ ամաչեց նոցա մօտ, և փախաւ գաղտեց[14]. և չհամարձակուեց[15] այնտեղից կըրկին դուրս գալ և երեւալ[16] նաև[17] ագռաւներին:

**Բարոյական.** Այս օրինակ է նոցա որ ուրշի բանով զարդարւում են և մեծութիւն են անում[18]:

1. Raaf. 2. tooien, versieren. 3. vederen. 4. verscheidene. 5. onder. 6. vereerd (of geprezen) worden. 7. ofschoon. 8. hadden pret. 9. veelkleurig. 10. sluwhed. list. 11. pikken. 12. maar ook. 13. uittrekken. 14. zich, verschuilen. 15. niet wagen. 16. verschynen. 17. zelfs. - 18. groot vertoonen.

## 23. ՈՒՂՏ[1] ԵՒ ԴԻՈՍ[2]

Մի օր ուղտն տրտնջաց[3] Դիոսին, թէ՝ «չո՛ւմար չաստուածներն ցուլին և եզին[4] պոզ[5] են տուել և ինձ միայն ականջ[6]: Արևման է[7] թէ», ասեց տրտնջողն. «ինձ յաւել կվայելէն[8] պոզերն քանթէ միւս կենդանեաց, և եթէ այդոնք իմ գլխոյ վերայ բուսած[9] ելնէին, ես շատ գեղեցիկ կ'երևայի[10], և իմ համար զարդարանք[11] կելնէին և գործիք պաշտպանութեան[12]»:

Երբ տրտունջն վերջ ելաւ[13], ուղտն կարծէց թէ Դիոս իւրն լսէց, և փափագն[14] կ'կատարէր. բայց հակառակն[15] ելաւ. վասնզի[16] Դիոս բարկանալով նորա անխելք գանգատանքի[17] վերայ, ոչ միայն նորա խնդիրքն[18] չկատարէց, այլ և նորա ականջներն պզտիկացրէց:

**Բարոյական.** Այս օրինակ է անբաւարար[19] մարդոյ:

1. kameel. 2. Jupiter (afgodsnaan). 3. klagen, morren. 4. os. 5. hoorn. 6. oor. 7. het schynt. 8. te pas komen. 9. gegroeid. 10. eruit zien. 11. versiersel. 12. verdediging smiddel. 13. eindigde. 14. 'tverlangen. 15. tegenovergestelde. 16. want. 17. aanspraak; gemor. 18. verzoek. 19 ontevreden.



## 24. ԱՌԻՒԾ, ԿԻՆՃ[1] ԵՒ ԱՆԳՂ[2]

Առիւծն և խոզն այնպէս կատաղած[3] էին միմեանց վերայ, որ կռուելով՝ ջանանում էր մին միւսին պատառել:

Բայց անգղ թռչունքն լաւ միտք էին դնում նոցա կռիւ տալուն, և իրուր մէջ ասում էին. «Եթէ լաւ մտածենք այս առաջիկայ[4] յաղթութիւնը[5] մեր համար շատ օգուտ[6] ունի, և հաստատ սոքա միմեանց հեշտ[7] չեն թողնել[8] մինչ մին սատակի[9]. վասն որոյ՝ կա՛մ առիւծն կա՛մ կինճն մեզ կերակուր պէտք է ելնի»: Սոցա ասութիւն իզուր[10] չելաւ, քանզի սոքա էլ յաւել որս[11] գտան քան թէ կարծել էին սկըզբումն: Վասն զի առիւծն խոզին պատառէց և խոզն ևս իւրն պաշտպանելոյ համար[12] առիւծին խիստ վիրաւորել էր[13], վասն որոյ խոզի մեռնելուցն քանի օր յետ՝ առիւծն ևս մեռաւ իւր խոցիցն[14] և այսպէս անգեղքն երկքին ևս յափշտակեցին[15] կերան:

**Բարոյական.** Այս օրինակ է ոխակալ[16] և կռուասէր[17] մարդկան:

1. ever. 2. vouw. 3. razend. 4. aanstaand. 5. overwinning. 6. voordeel. 7. gemakkelyk. 8. loslaten. 9. omkomen. 10. ydel; vruchteloos. 11. buit. 12. om zich te verdedi gen. 13. verwonden. 14. wond. 15. rooven. 16. boosaardig; wraakzuchtig. 17. twistziek.

## 25. ԷՇ

Մի էշ երբ միանգամ աղ բարձած[1] մտաւ ջրի մէջ՝ աղն շուտով հալուեց[2]: Քանի օրից յետ սպունգ[3] բարձած, երբ անց էր կենում[4] միևնոյն ջրոյ մօտ, շուտով վազեց մտաւ ջրին մէջ որ բեռնի ծանրութիւնն թեթևացնէ, որպէս առաջին անգամ եղել էր: Բայց հակառակն ելաւ. վասն զի սպունգն ջուր ծծեց[5] և բոլորն խիստ ուռեցին[6], վասն որոյ իշոյ բեռն այնպէս ծանրացաւ որ չ'կարողացաւ տանել[7], ընկաւ ջրին մէջ և խեղդուեց[8]:

Բարոյական. Անխելք մարդն ո՛րչափ[9] ջանանայ խելօք բան անել այնչափ յաւել վատ[10] կ'անի. վասն որոյ շատ լաւ է որ ի՛նչ որ միայն ինքն կարող է՝ այդ անի և աւելի բան չմտածէ:

1. beladen. 2. smolt. 3. spons. 4. liep voorby. 5. zuigen. 6 opzwellen. 7. dragen. 8. verdrinken. 9. hoemeer. 10. des te slechter.

## 26. ՄՈՒԿՆ ՓՈՔՐԻԿ ԵՒ ՄԱՅՐՆ:

Մի մկան ձագ պատմում էր իւր մօրն ինչ որ իւրն հանդիպել էր[1] իւր ճանապարհորդութեան[2] մէջ որ գնացել էր և յետ էր եկել: Ասում էր թէ. «հետաքրքրութիւնս[3] մղեց[4] ինձ որ մի տան մէջ մտնեմ. և այս տեղ մի կենդանի գտայ որ չէի ճանաչում, բայց շատ գեղեցիկ էր և ես շատ հաճեցայ[5] նորան. վասն զի կերպարանքն[6] անոյշ[7] էր և համեստ[8], շատ սիրուն գոյն[9] ունէր և պոչն ձիգ էր գրեթէ[10] մերին նման[11]: Այնպէս սիրեցի[12] որ ուզում էի մօտ



կանալ և ծանօթուել[13] նորան. բայց յանկարծ մի անզգամ[14] թռչուն՝ որ գլխի վերայ ճղատած[15] միս ունէր, խափանեց[16], և իւր սուր ձէնովն այնպէս վախացրեց ինձ որ դողալով[17] փախայ»: «Որդեակ[18]»: ասէց մայրն, «փառք տուր[19] Աստուծոյ որ փրկուել[20] ես, քանզի այդ կենդանին, որ քեզ անոյշ էր երեւում, կատուն է. բայց թռչունն՝ որձակն է, որ մեզ վնաս[21] չէ տալ, այլ կատուն թողեալ մեր կորուստն[22] ուրիշ բան չէ մտածում: Ուրեմն[23] իմացիր թէ որքան անխոհեմ[24] ես դու»:

Բարոյական. Այս օրինակ է այն մարդոյ որ միայն գեղեցկութեան[25] է ականում, և իւր լաւ բարեկամը չէ ճանաչում:

1. tegen komen. 2. reis. 3. nieuwsgierigheid. 4. voortdryven 5. iegenomen zyn met. 6. 't voorkomen. 7. welgevallig, behagelyk. 8. bescheiden, stil. 9. kleur. 10. byna. 11. gelyk de onze. 12. houden van. 13. kennis maken met. 14. ondeugend; snood. 15. in stukken gescheurd. 16 hinderen; storen. 17. bevend. 18. myn kind. 19. bedank. 20. ontkomen. 21. kwaad. 22. dood. 23. dus. 24. onvoorzichtig. 25. mooiheid.

## 27. ԷՇ ԿՌԱԲԱՐՁ[1]:

Միանգամ մի էշ կուռք[2] բարձած անցէր կալման բազմութեան[3] միջով, և ժողովուրդն[4] երեսի վերայ ընկած[5] յարգութիւնով[6] երկրպագութիւն էր անում[7] կուռքին: Բայց՝ էշն կարծելով թէ այս պատիւն[8] իւրն են տալման, սկսեց հպարտ կերպում[9] յառաջ գնալ՝ շատ ծանր[10] և հանդարտ[11] քայլերով[12], և գլուխն բարձր բռնած և անկաջներն տնկած: Բազմութիւնից մին նորան էսկերպ տեսնելով, այսպէս ասէց. «Պարոն աւանակ[13], դու կարծում ես թէ արժանի ես[14]

մեր յարգութեան, մի փոքր սպասի՛ր մինչև այս կուռքըն՝ որ տանում ես, վերնից[15] քաշ գոյ, գաւազանն[16] քեզ կը հասկացնի թէ այդ յարգութիւն[17] որ մեք անում ենք, քո՛ համար է թէ նորա համար »:

Բարոյականն. Այս օրինակ է փառասէր[18], հպարտ մարդկան, որ դրսից[19] պատիւ տեսնելով՝ կարծում են թէ իւրենք մեծ մարդիկ են:

1. Met een afgodbeeld beladen. 2. afgodbeeld. 3. menigte (menschen). 4. 't volk. 5. voorover op den grond gelegen. 6. eerbiedig. 7. aanbad. 8. eerbewys. 9. trotsch. 10. deftig. 11. langzaam. 12. stap. 13. ezeltje, grauw. 14. waardig zyt; gy verdient. 15. van je rug. 16. stok. 17. eerbiediging. 18. eerzuchtig. 19. van buiten.

## 28. ԱՐԾԻՒ[1] ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ[2]

Մի արծիւ իւր բնից երկարից[3] տեսաւ որ նապաստակի ձագերն խոտ էին ուտում, յանկարծ վերայ հասաւ[4] յափշտակեց և տարաւ իւր ձագերի համար: Այլ[5] նոցա մայրն աղաչեց արծուին որ խնայէ[6] և ձագերն յետ տայ: Բայց արծիւն առանց նորա աղաչանքին[7] ականջ դնելոյ[8] մի մին[9] ձագերն մեռցրեց նորա աչքի առաջ[10]: Մայրն ևս կսկծից[11] կատաղելով[12], և ուրիշ ճար չգտանելով որ վրէժխնդիր լինի[13], սկսեց ծառի տակի հողն փորել[14], և այնչափ փորեց մինչև քամի[15] կպելով ծառն վայր ընկաւ, և արծուի ձագերն ևս վայր ընկան և մեռան:

Բարոյականն. Այս խրատ[16] է նոցա որ իւրենց մեծութեան[17] ապաւինելով[18] աղքատին անիրաւում են[19], նոքա չգիտեն թէ մի օր ևս աղքատն կարող է վրէժխնդիր լինել:



1. Arend. 2. haas. 3. uit de verte. 4. viel aan. 5. maar. 6. sparen. 7. smeekbede. 8. luiseren naar. 9. één voor één. 10. vóór. 11. door de angst of zielsfoltering. 12. in woede ontstoken. 13. zich wreken. 14. uitgraven. 15. wind. 16. waarschuwing. 17. grootheid. 18. steunen op. 19. onrecht doen aan.

## 29. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԳԱՅԼ

Մի գայլ իւր բունոյ մէջ նստած ապրում էր[1] իւր կերակուրներով, որ նա ժողովէլ էր և պահում էր:

Բայց աղուէսն իմացաւ, և վազեց եկաւ նորան տեսութիւն[2], այն մտքով[3] որ սատանութիւնով[4] կերակուրն նորանից յափշտակի: Բայց՝ որովհետև[5] գայլն լաւ զգուշանում էր, աղուէսն չկարողացաւ մի բան գտանել: Տեսնելով թէ այս չեղաւ մի ուրիշ հնարք[6] մտածեց: Գնաց հովուի[7] տունն և նորան լուր տուէց[8] գայլի տեղն, և առաջն—ընկաւ տարաւ[9] այնտեղ. խորհուրդ տուէց[10] որ այն չար գազանին[11] մեռցնի, ասում էր թէ. « Շատ անգամ քո լաւ ոչխարներն կերել է »: Հովիւն հետևէց[12] աղուէսի խորհրդին և գնաց էնտեղ, յառաջն գայլին սատակէց[13] և յետոյ աղուէսին ևս սպանէց, որ իւր շահի[14] համար ուրշի մատնիչ[15] եղաւ:

Բարոյականն. Այս օրինակ է մատնիչ մարդկան, որ իւրենց արժանաւոր[16] պատժին կհասանեն, թէ շուտ և թէ յետի:

1. leefde. 2. bezoeken. 3. met 't doel. 4. met list. 5. daar aangezien. 6. streek, list. 7. herders. 8. kennis geven. 9. geleiden. 10. aanraden. 11. beest. 12. volgde. 13. doodslaan. 14. voordeel. 15. verrader. 16. welverdiend.

## 30. ԷՇ ԵՒ ՓՈՔՐԻԿ ՇՈՒՆ

Միանգամ մի պարոն իւր շունն սիրելով խաղում էր նորա հետ իշոյ յառաջ: Էշն այդ տեսնելով նախանձեց[1] նորա երջանկութեան[2] և իւրնում մտածեց. «Ի՞նչ է անում այս փոքրիկ շունն որ մեր տրոջն[3] այսչափ սիրելոյ արժանի[4] է եղել, բայց խաղումէ և իւր թաթիկներն[5] տալման է նորան. ա՛հ, եթէ այդով միայն սիրելի[6] է, էդ ես էս կարող եմ անել». այս ասելով՝ նա կանգնեց յետկուսի[7] երկու ոտների վերայ, և տրոջ առաջ կոշտութեամբ[8] նորա պէս արէց: Բայց տէրն շատ զարմանալով[9] մերժեց[10] նորա կոշտ[11] սէրն[12]. և իւր ծառայից[13] կանչեց, որ շուտով եկին փայտով լաւ թակեցին և հատուցում արին[14] նորա քաղաքավարութեանն[15]:

Բարոյականն: Այս օրինակ է յանդուգն[16] մանկան, որ ուզում է մեծի նման ենել:

1. benyden. 2. geluk. 3. meester; heer. 4. beminenswaardig. 5. pootjes. 6. lief. 7. achterste. 8. met grofheid. 9. verwonderd. 10. weigerde. 11. grof. 12. liefdebetuiging. 13. bediende. 14. betaalden voor. 15. beleefdheid. 16. brutaal.

## 31. ՀԱՒ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾ[1]

Մի հաւ միանգամ իւր նոր ձուից հանած[2] ձագերն տարաւ իւր հետ արտերի[3] մէջ, և իւր տեղից շատ հեռացաւ[4]: Երբոր նա անփոյթ պտտում էր[5], մի բազէ[6] յանկարծ արևաց այդ տեղում, և ուզում էր նորա ձագերն յափշտակել[7]: Հաւն ինչ որ կարող էր անել արէց որ իւր ձագերն ազատի. մինչև փախաւ և մի ապահով[8] տեղում, որ մօտիկ էր, ազատուեց, և էստեղ մի վանդակ[9] գտանելով, ձագերին հետ մտաւ նորա մէջ և գաղուեց[10]: Բայց երկրագործն[11] նորան տեսնելով, շուտով վազեց, հաւին իւր ձագերովն բռնեց և տարաւ:



Բայց հաւի մխիթարութիւնն[12] էր, թէ նա իւր ձագերն ազատեց անողորմ[13] թշնամւոյ[14] ճանկից[15]:

Բարոյականն. Այս օրինակ է բարի ծնողաց[16], որ ուրախ են իւրէնք մի վնաս կրեն[17], քանթէ իւրեանց զաւակները[18] չար ընկերների հետ գնան:

1. landman. 2. uitgebroeid. 2. veld. 4. verwyderde zich. 5. rondliep. 6. valk (vogel). 7. grypen. 8. veilig. 9. kooi. 10. verschool zich. 11. landman. 12. troost. 13. wreed. 14. vyand. 15. klamsen. 16. onders. 17. schade (verlies) lyden. 18. kinderer.

## 32. ՊԱՏԱՆԻ[1] ԵՒ ԳՈՂ

Մի պատանի երբոր մի ջրհորի[2] մօտ քարի վերայ կշտու էր[3], մի գող մեկն[4] եկաւ նորա վերայ, որ նորա շորերը հանել տայ[5], վերառնի տանի. բայց պատանին հասկանալով նորա չար միտքն[6], սկսեց լալ: Այս ժամանակում գողն հարցրեց. «Ի՞նչ պատճառի համար ես լալման»: Նա էս պատասխանեց. «Վա՜յ ինձ[7] նոր մի ոսկիէ աման[8] ձգեցի այս հորի մէջ»: Գողն այս հաւատալով՝ շուտով իւր հագուստը[9] հանեց, և մտաւ հորն որ ոսկիէ ամանն, որ պատանին ասում էր ընկաւ ջրհորին մէջ, փնտռի[10]: Բայց երբոր գողն հորին մէջ էր՝ պատանին գողի շորերն ժողովեց, վերառեց և փախաւ:

Բարոյականն. Այս օրինակ է խելացի[11] մարդոյ,

որ կարող է ամէն բանի հնարք շուտով գտանել. այս պատճառի համար իմաստուն[12] մարդն բոլորին ևս ցանկալի[13] է։

1. 'ong mensch. 2. put. 3. lag. 4. regelrecht. 5. laten uittrekken. 6. bedoeling; inzicht. 7. Wee my. 8. gouden kom. 9. kleeding. 10. zoeken. 11. verstandig. 12. wys. 13. beminnelyk.

## 33. ՁԻ ԵՒ ԷՇ

Մի ձի գլուխն վեր բռնած[1] հանդէսով[2] գնում էր, և նորա վերայ ծանրագին[3] զարդարանք[4] ելնելով՝ հպարտ կերպում էր քայլում[5]։ Մի էշ անզգուշութեամբ անցկալով այդ տեղով՝ ձիոյ ճամբէն[6] արգելեց[7]։ Բայց ձին գոռոզութեամբ[8] ասէց նորան. «Ով անպիտան[9], ինչպէս ես վստահանում[10] իմ ճամբէն արգելել, կորիր այդտեղից՝ եթէ ոչ[11] քեզ կոխելով անց կ'կամ»։ Էշն վախենալով մի կողմ քաշուէց[12] շուտով։ Յետոյ ձին ուզէց իւր զօրութիւնը[13] յայտնել[14]. և նա սկսէց բոլոր ուժովն[15] վազել. բայց վազելովն այնպէս իւր մարմինը[16] փնասուէց, որ այնուհետև[17] անպիտան ելաւ. մինչև տէրն տեսաւ թէ այլ պիտանի[18] չէ՝ և ծախէց մի երկրագործի։ Երբոր էշն յետ դարձաւ ջրաղացն, քանի օրից յետ տեսաւ որ ձին արօրն[19] քաշում էր, գետինն փորելոյ[20] համար. Նա շատ զարմացաւ, բայց նորան որոք բան չասէց, և շատ ցաւակից ելաւ[21] նորան։

Բարոյականն. Այս մի լաւ խրատ է հպարտ մարդոյ համար։

1. omhoog gehouden. 2. vertoonmakend. 3. kostbaar. 4. versiersels. 5. voortstappen. 6. gangsweg. 7. belette. 8. hoovaardig. 9. O, je prul van een dier. 10. durven. 11.



anders. 12. ging opzyde. 13. kracht. sterkte. 14. vertoonen. 15. met al zyn kracht. 16. lichaam. 17. van toen af. 18. bruikbaar. 19. ploeg. 20. omspitten. 21. medebyden hebben met.

## 34. ԱՌԻՒԾ ԵՒ ԳԱՅԼ

Մի ծեր առիւծ՝ երբ հիւանդ[1] կշտուընկածէր այրի[2] մէջ, ամէն կենդանի գնաց նորան տեսնելոյ՝ թողեալ աղուէնս, բայց գայլն մատնութիւն էր անում[3] առիւծին թէ. «աղուէսն քեզ ոչինչ համարելով[4] չեկաւ»։ Այս միջոցում[5] աղուէսն ևս եկաւ և տեսաւ որ առիւծն բարկացել է իւր վերայ, բանն հասկացաւ[6]. գնաց նորա առաջ և ասէց. «Տէր իմ[7], որ կենդանի մտածէց[8] քո շահը[9] որպէս ես աշխարհք պատելով քո համար դեղ գտայ բժշկներից[10]»։ «Ինչ է դեղն, հարցրէց առիւծն։ «Քեզ դեղ է այն», պատասխանէց աղուէսն, «որ գայլին ողջ ողջ[11] քերթես[12] և կաշին տաք տաք[13] հագանես»։ Առիւծն հաւատալով. իսկոյն պատառէց[14] գայլին, և երբոր կաշին հանում էր աղուէսն ծիծաղելով ասէց. «Այսպէս իմացիր, որ չի պէտքայ մեծաւորին[15] բարկացնել, այլ պէտք է յորդորել[16] ի բարեկամութիւն»։

Բարոյականն. Այս օրինակ է շողոքորթող[17] մարդոյ, որոյ վախճանն[18] ևս մեծ պատժով կելնի։

1 ziek. 2. grot. hol. 3. valschheid doen. 4. beschouwen. 5. Intusschen. 6. hy kwam erachter. 7. Sire. 8. dacht aan. 9. voordeel. 10. van de doktoren. 11. levend. 12, villen. 13. zoo heel warm. 14. verscheurde. 15. de meerdere, de heer. 16. overhalen. 17. vleier. 18. wienseinde (dood).

## 35. ԱՅԳԵԳՈՐԾ[1] ԵՒ ՈՐԴԻՔ[2] ԻՒՐ

*Մի այգեգործ երբ տեսաւ թէ իւր մեռնելը[3] մօտիկ է՝ կանչեց իւր որդւոցն և ասէց. «Որդեակք[4], առանց իմ խորհուրդ[5] ձեզ իմացնելոյ[6] ես չեմ ուզում մեռնել. և մի պատճառի համար[7] մինչև էսօր ես ձեզանից ծածուկ[8] եմ պահել։ Իմացէ՛ք՝[9] որ իմ այգւոյ[10] մէջ ես գանձ[11] եմ թաղել[12]. չ'մոռանէ՛ք՝ երբ ես կ'մեռնեմ, դուք ևս՝ յետ ձեր պարտիքն[13] կատարելոյ[14], կ'փորէ՛ք որ այդ գանձը գտանէք»։ Բարի[15] ծերն մեռաւ. որդիքն վազեցին այգին՝ և բոլոր հողն մի ծայրից[16] մինչև միւսն փորեցին և տակնուգլուխ[17] արին. բայց իզուր[18] վաստակեցին, որոք բան չգտան ինչ որ իւրէնց հայրն ասէլ էր։ Նոքա կարծեցին թէ ծերն նոցա խաբէց, բայց նոքա փութով[19] գլուխ ընկան[20] որ նորա ասածը ճշմարիտ[21] էր. վասն զի՝ հողն այս կերպ փորելով այնքան պտղաբեր[22] ելաւ, որ շատ տարիներ այգին սովորականից[23] երեք-տակ[24] յաւել բերք[25] տուէց։*

1. Wyngaardenier. 2. zonen. 3. 't storven. 't sterfmor. 4. myne zonen. 5. 't geheim. 6. te doen weten. 7. om eenige reden. 8. geheim; verborgen. 9. Weet dan. 10. այգի=wyngaard. 11. schat. 12. begraven. 13. plicht. 14. nakomen. 15. braaf. 16. zyde, hoek. 17. onderste boven. 18. tevergefs. 19. weldra. 20. verstonden; begrepen. 21. waar. 22. vruchbaar. 23. gewoonlyk. 24. drie maal. 25. voortbrengselen.



## 36. ԾԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿ

*Մի ծեր տեսաւ որ մի մանուկ մտէլ էր մի պարտէզի[1] մէջ և պտուղ[2] էր գողանում. Նա սկսէց անոյշ[3] խօսքերով խրատել որ այդ չարութիւն չ'անի, և այնտեղից գնայ։ Բայց մանուկն ծաղր անելով[4] չուզէց նորա խրատն լսել։ Ծերն՝ տեսնելով թէ խօսքն օգուտ չ'ունէր[5] ասէց իւրնում. «Ես միշտ կարծումէի թէ մարդոյ զօրութիւնն[6] խօսքում և ուժում[7] է, այժմ խօսքս մի զօրութիւն չ'ունի, տեսնենք ուժն զօրութիւն ունի՞։ Այս ասելով քարեր ժողովէց, և սկսէց մանկանն քարով տալ։ Մանուկն շուտով ծառիցն վայր եկաւ և փախաւ։ Եւ այսպէս ինչոր խօսքն չկարողացաւ անել ուժն արէց։*

*Բարոյական. Այս խրատ է մանկանց համար, որ ծերոց խօսքն լաւ պահեն. վասնզի նոքա միշտ շատ հարկաւոր խրատ և խորհուրդ[8] կ'տան։*

*Հարց. Ինչ է ողջից-թանգն[9] աշխարհում։*

*Պատասխան. Մի խելօք և փորձառեալ[10] ծերի խրատներ։*

1. tuin. 2. vrucht. 3. zoete. 4. uitlachen. 5. niet baatte. 6. macht. 7. kracht. 8. raad. 9. de duurste. 10. ervaren.

## 37. ՀՈՎՒՒ ՍՏԱԽՕՍ[1]

*Մի հովիւ իւր համար զբօսանք[2] էր արէլ՝ որ ժամանակ առ ժամանակ[3] վայումէր «Գա՜յլ, գայլ». թէպէտ[4] որոք բան չ'կայր։ Դրացիքն[5] երբ այս ձայն կ'լսէին շուտով կ'վազէին կ'գային[6] նորան*

օգնել: Բայց հովիւն փոխարէն շնորհակալ ելնելոյ նոցանից՝ կ'ծիծաղէր նոցա վերայ զուարճանալով [7], և շատ անգամ այդպէս անելով խաղումէր: Բայց մի օր պատահէց [8] որ գայլն իսկապէս [9] եկաւ և մտաւ ոչխարների հօտին [10] մէջ: Հովիւն պօռաց և կանչէց որչափ ձայն և ուժ ունէր այլ բոլորն իզուր. վասն զի դրացիքն՝ կարծելով թէ կըրկին սուտ է վայում՝ չուզեցին գնալ նորան օգնել: Վասն որոյ յաջողէց [11] գայլին, որ բոլոր ոչխարներն պատառէց:

Բարոյականն. Ստախօս մարդոյ շահն [12] այն է, որ մինչև անգամ [13] մեկն ևս խօսի՝ որոք մարդ չի հաւատալ:

Շատ հին ժամանակում սուտ-երդում-ուտողի [14] լեզուն կ'կտրէին [15]:

1. leugenaar. 2. vermaak. 3. van tyd tot tyd. 4. ofschoon. 5. buren. 6. kwamen toegeloopen. 7. opgetogen. 8. 't gebeurde. 9. werkelyk. 10. kudde. 11. het lukte 12. voordeel. 13. zelfs. 14. valsch zweerer; meineedig. 15. men zou afsnyden.

## 38. ԱՌԻՒԾ ԵՒ ՃԱՆՃ

Ճանճն պատերազմ բացաւ [1] առիւծին հետ և խելքովն յաղթէց [2] նորան, վասն զի՝ երբեմն մէջքն կծէց՝ երբեմն կուշտն [3] մինչև համարձակուէց [4] բոլոր տեղ կծել. յետոյ մտաւ ականջն և քիթն՝ և այնչափ նեղութիւն տուէց [5] մինչև առիւծն կատաղութիւնից [6] ինքն իւրն պատառէց. ասելով թէ, «ինչո՞ւ համար պէտքէ մի փոքրիկ կենդանի ինձ էսպէս չարչարի [7] և ես նորան չկարողանամ մի բան անել»:

Բայց ճանճն այս յաղթութիւն [8] որ արէց՝ սկսէց



բզզալով [9] վերվեր թռել [10] և գնաց որ գործարարին [11] պատմի իւր յաղթութիւն, մինչև խոտորելով [12] գնաց ընկաւ գործարարի գործին [13] մէջ և բռնուէց: Երբոր տեսաւ թէ թշնամին վազումէ իւր վերայ, սկսէց ողբալ [14] «Վա՜յ ինձ. որ առիւծի ճանկերից ազատուեցի, և այժմ գործարարի ոտներն ինձ կ'սատկացնեն»:

Բարոյականն. Օրինակ է ամբարտաւան [15] մարդոյ, որ վերջումն մի փուճ բանով կ'կործանուի [16], որ հասկանայ իւր ինչ ելնելն [17].

1. stryd voerde. 2. overwon. 3. zyde. 4. durven. 5. ergeren. 6. uit woede. 7. martelen. 8. overwinning. 9. gonzen. 10. juichen. 11. spin. 12. verdwalen. 13. web. 14. zich beklagen. 15. hoovaardig, ingebeeld. 16. te niet gaan. 17. wat hy is.

## 39. ՄՈՒԿՆ ԵՒ ԻՒՐ ՁԱԳ

Մի մշակ [1] տեսաւ մի մուկն և յետնէն ընկաւ [2] որ սպանի, բայց մուկնն չէր կարողանում իւր ծակը գտանել. աչքի պզտկութիւնից [3] որ փախնի, թէպէտև որչափ կարելի [4] էր վազումէր դէպ [5] ծակն: Վասն որոյ ձագն կանչէց առ նա: «Մայրիկ [6] անկարելի է ազատուես մինչև որ մին [7] քեզ առաջնորդ [8] ելնի, ուրեմն իմ յետնէն ե՛կ, ես քեզ կ'տանեմ էնտեղ որ տեղից դուրս եկար»: «Ը՛հ, որդեակս [9]». ասէց մայրն. «Ինչպէս եմ կարող քեզ ինձ առաջնորդ շինել, երբոր ես գիտեմ թէ դու ինձնից յաւել լաւ չես կարող տեսնել»:

Բարոյականն. Այս օրինակ է այն մանկան որ վըստահանում [10] է մեծից շատ յաւել խելօք ելնել:

1· werkman· 2· naloopen, vervolgen· 3· door de nietig heid kleinheid· 4· mogelyk· 5· naar· 6· moebertje mama· 7· iemand· 8· geleider· 9· kind· 10· durft·

## 40· ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՏՈՒ

*Աղուէսն և կատուն միասին ճանապարհ էին գնում. գնալոյ ժամանակ սկսեցին զանազան[1] բաների վերայ խօսել, վերջապէս[2] աղուէսն ասէց միւսին. «Բարեկամ, պէտք է յայտնի[3] խոստովանես[4] թէ իմ մտքի-բարակութիւնն՝[5] և խելքս քոնից[6] շատ վեր է[7]»: Կատուն պատասխանէց. «Ես հաւատում եմ. բայց կ՚աղաչեմ[8] տեսնե՛նք[9] ինչ օգուտ կ՚ելնի քեզ այդ այժմ. տեսնո՞ւմես որսորդի[10] երկու շներն որ մեկն վազումեն մեր վերայ: Եթէ չեմ սխալիլ[11], նոքա քո խորամանկութիւնը[12] վերջ կ՚տան[13]: Եթէ ինձ հարցանես, ահա[14] իմ խորամանկութիւնը»: Այս ասելով թռաւ նա մի ծառի վերայ, և գնաց ծայրին[15] նստաւ:*

*Բայց աղուէսն՝ որ այդքան զրէնգ[16] էր՝ չկարողացաւ միև նոյնն անել. և թէպէտ շատ անգամ իւր հնարքներովն[17] շներին խաղացրէց[18] արգելէց, և քսան անգամ նոցա առաջով փախաւ, բայց իզուր, քանզի չկարողացաւ ազատուել, և շներն նորան բռնեցին և պատառեցին[19]:*

*Բարոյական. Այս օրինակ է պարծեցող[20] մարդոյ:*

1· verscheidene· 2· ten slotte· 3· ronduit· 4· bekennen· 5· sluwhdid· 6· dan de uwe· 7· overtreft· 8· ik bid u· 9· laat ons zien· 10· jager· 11· zich vergissen· 12· slimheid· 13· een einde maken aan· 14· ziedaar· 15· top· 16· slim; by de hand· 17· streken· 18· teleurstellen· 19· verscheuren· 20· snoevende·



## 41· ՄԱՐԴՆ ՈՐ ՇՆՉՈՒՄԷ[1] ՑՈՒՐՏ ԵՒ ՋԵՐՄ[2]

*Մի խիստ ձմերան մէջ մի ճանապարհորդ ցրտիցըն սառելով մտաւ մի գիւղացւոյ[3] տուն, և աղաչէց որ իւրն նորա տան-տեղ-տայ[4]: Գիւղացին սիրով[5] ընդունէց[6] նորան, շուտով կրակ վառէց, յետոյ տաք տաք կերակրներ հանէց նորա համար: Բայց կրակ վառելոյ ժամանակ, երբոր գիւղացին գնումէր և գալիս էր՝ տեսաւ թէ ճանապարհորդն շընչումէր իւր մատների վերայ. հարցրէց նորան. «Այդ ինչ է նշանակում»: «Մատներս, պատասխանէց նա, «ցրտիցն սառել են, շնչումեմ նոցա վերայ որ տաքացնեմ որպէս տեսնումես»: Փոքր ժամանակ անցկացաւ՝ տեսաւ որ խաշուի վերայ ևս միևնոյնպէս փչումէր. գիւղացին ասէց, «փչումե՞ս որ խաշուն տաքացնես»: «Ոչ», ասէց նա, «այլ սառնացնելոյ համար»: Գիւղացին պատասխանէց զարմանալով. «Աստուծոյ ընդդէմ[7] կ՚ելնի եթէ էլ ձիգ ժամանակ իմ տանը էսպէս մի մարդ պահեմ, որոյ բերանից թէ տաք է դուրս գալիս և թէ սառն»:*

*Այս ասելով իւր խուցից[8] նորան շուտով դուրս արէց և դուռնն փակէց[9]:*

*Բարոյական. Այս օրինակ է խաբեբայ[10] մարդկան, որ այժմ մի տեսակ են խօսում՝ և փոքր ժամանակից յետ մի ուրիշ տեսակ, միանգամայն ներհակ[11] իրուր. վասն որոյ մեք պէտք է զգոյշ ելնենք, և էս պէս մարդկան մեզ բարեկամ չշինենք:*

1· ademen, blazen· 2· warm· 3· boer· 4· in huis nemen· 5· gaarne· 6· ontvangen· 7· tegen· 8· hut, stulp· 9· sluiten, dicht, doen· 10· bedrieglyk· 11· tegenstrydig·

## 42. ՀՈՂԱԳՈՐԾ[1] ԵՒ ԱՐԱԳԻԼ[2]

Մի երկրագործ լարեց[3] իւր որոգայթ[4], և մի արագիլ մի քանի որսող-թռչունների[5] հետ եկաւ և ընկաւ նորա մէջ։

Այդ ժամանակում երկրագործն բռնեց թռչուններն և մեռցրեց. և երբոր պատրաստուեց[6] արագլին ևս մեռցնի, արագիլն աղաչելով ասեց. «Ես ո՛չ չարագործ[7] եմ և ոչ աւազակների[8] մեղսակից[9]. վասն զի՝ նոքա ինձ սովորացրին և ակամայ[10] բերին ինձ այստեղ. և ես այժմ դոցա մէջ գտնուեցի[11] և ինձ բռնեցիր, վասն որոյ՝ մեծ անիրաւութիւն[12] կ'ելնի եթէ ինձ ևս մեռցնես նոցա հետ»։ Երկրագործն պատասխանեց. «Դու մեռնելոյ արժանի[13] ես, ինչպէս եմ կարող քեզ բարի անել, երբ ես քեզ չար ընկերների հետ գտայ»։ Այս ասելով վիզն[14] կտրեց։

Բարոյական. Այս օրինակ է նոցա՝ որ ասումեն թէ «Ես լաւ եմ և չար մարդն ինձ որոք բան չէ կարող անել».

Բայց չար մարդոյ հետ միացողն[15] ևս չար կ'ելնի։

1. landman. 2. ooievaar. 3. spannen, zetten. 4. valstrik. 5. roof-vogels. 6. stond gereed. 7. schelm; ondeugende. 8. roovers. 9. medeplichtig. 10. onwillekeurig; met tegenzin. 11. ik werd bevonden. 12. onrechtvaardigheid. 13. gy verdient. 14. hals. 15. die verkeert.



## 43. ՄԱՐԴ ԵՒ ԼՈՒ[1]

Մի լու մի մարդի կուռ խիստ կծեց. մարդն ցաւն որ իմացաւ այնպէս անհանգիստ[2] ելաւ՝ որ ուզեց բռնել և իսկոյն սատկացնել. վասն որոյ՝ երբ ձեռն ձգեց[3] իսկոյն բռնեց, և ուզումէր տրորել[4]. լուն ասեց նորան. Մտածիր որ ես քեզ միայն կծեցի՝ և դու ուզումես ինձ մեռցնել. ինձ խղջա[5]. այն ժամանակ ես այս բանին արժանի կ'ելնէի, եթէ որ ես ուզենայի քո կենացն վնաս տալ»։ Մարդն պատասխանեց. «Եթէ դու կարողութիւն ունենայիր[6] անելոյ, հաստատ կ'անէիր։ Այս ասելով տրորեց մեռցրեց նորան։

Բարոյական. Այս օրինակ է թէ ամենայն արարած[7] կարող է վնաս տալ. վասն որոյ մի մանուկ պէտք չէ իւր մեծին ջանանայ վնաս տալ, վասն զի՝ գուցէ նա շատ բարկանայ և նորան խիստ յետ վնասի։

1. vloo. 2. ongerust; verstoord. 3. uitstak. 4. verpletteren. 5. heb medelyden met my. 6. in staat waart. 7. schepsel.

## 44. ԾԵՐ ԵՒ ՄԱՀ[1]

Մի օր մի ծեր մարդ գնացել էր սարն փայտ կտրելոյ, և կտրած փայտերն կապել էր և մի բեռն[2] էր շինել։

Երբ նա շալակած[3] տանումէր դէպ քաղաքն[4] շատ վաստակեց, քանզի ճանապարհն երկայն[5] էր, մինչև չկարողացաւ դիմանալ[6], բեռն վայր գձեց՝ և սկսեց մահին կանչել որ իւրն հասանի։

Մահն յանկարծ արեւաց նորան և հարցրեց թէ «Ինչո՞ւ համար[7] էիր ինձ կանչում»։ Ծերն պատասխանեց դողալով[8]. «Քեզ կանչեցի որ գաս բեռնս օգնես բարձրացնես[9] իմ վերայ»։

Բարոյական. Այս օրինակ է թէ մարդ՝ որչափ[10] մեծ նեղութեան[11] մէջ ելնի, և որչափ ծերութեամբ[12] չարչարուի[13], դեռևս մահից կ'փախնի և կ'փափագի[14] ապրիլ։

1. de Dood. 2. last. 3. op de schouders genomen. 4. stadwaarts. 5. lang. 6 uithouden. 7. voor wat waarvoor. 8. bevend. 9. optillen. 10. hoezeer. 11. nood; angst; verlegenheid. 12. met ouderdom. 13. lyden. 14. verlangen.

## 45. ՄԱՐԴ ԵՒ ՕՁ

Մի օձ միանգամ մի քարի տակ մնացել էր, և երբոր ճխլուումէր[1] տեսաւ թէ այնտեղով մի մարդ էր անցկալման՝ աղաչեց որ քարն վերնիցն վեր առնի նորան ազատի, և շատ մեծ պարգևներ[2] խոստացաւ մարդին։ Մարդն ևս քարն վերառեց նորա վերնից և օձին ազատեց։ Բայց օձն խօսքիցն յետ դարձաւ[3], և չուզեց նորան մի բան տալ, մինչև սկսեցին բարկանալով հակաճառութիւն անել[4]։ Այդ ժամանակում դիպուածով[5] մի կապիկ[6] այդտեղով անցէր կալման՝ նորան կանչեցին իւրէնց մէջ դատաւոր[7] դրին[8] որ այս վէճն[9] կտրի[10]։ Կապիկն ասէց. «Ես լաւ դատաստան[11] չեմ կարող անել, մինչև որ ես տեսնեմ օձն ինչպէս էր քարի տակ մնացել»։ Այս խօսքով պարտաւորեց[12] օձին որ կենայ[13], և մարդն քարն դրէց նորա վերայ։ Կապիկն դարձաւ և ասէց. «Ահա այս է ուղիղ դատաստանն՝ որ դու քարի տակ այսպէս մնալով սատկես»։



Բարոյական. Այս օրինակ է ապերախտութեան[14], որ շատ անգամ մարդին տառապանքի[15] մէջ է գձում և անօգնական[16] կորցնում է։

1. samendrukken. 2. (geschenken) belooning. 3. brak zyn woord. 4. twisten; stryden. 5. by toeval. 6. aap. 7. scheidsrechter. 8. aanstellen. 9. twist; geschil. 10. beslechten. 11. recht; oordeel. 12. noodzaakte. 13. blyven, wachten. 14. ondankbaarheid. 15. ellende. 16. hulpeloos.

## 46. ԱՒԱԶԱԿ ՀԵՂՁԵԱԼ[1]

Մի դատաւոր[2] ընկաւ մի աւազակի յետնայ[3] որ բռնի, բայց աւազակն այնպէս սրընթաց[4] փախաւ որ որով մարդ չկարողացաւ նորան բռնել. վասն որոյ աւազակն ազատուէց. և նա մտքումն վերջաւորեց[5] թէ որով ուրիշ տեղից երկիւղ չունի[6], կարծելով թէ իւր գործած չարութիւնները[7] առանց պատժոյ կ'մընան։ Բայց մեր երկնաւոր[8] Հայրը լաւ կերպով կարող է պատժել. վասն զի երբոր այս չարագործը[9] մտաւ մի գետի մէջ և ուզումէր միւս կողմն անցկենալ, և չգիտելով ջրի խորութիւնն, ոտներն սողացին[10] և նա գնաց տակն և խեղդուէց։

Բարոյական. Այս լաւ խրատ է չարագործ մարդոյ համար։

1. de verdronkene (roover). 2. rechter. 3. յետնէն ընկանել = vervolgen. 4. snel. 5. hy was overtuigd. 6. niets te vrezen. 7. schurkeryen. 8. hemelsche. 9. booswicht. 10. uitglyden.

## 47. ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ՕՁ

Մի անգամ մի երկրագործ ձիւնի[1] մէջ մի սառած[2] կիսամեռ[3] օձ գտաւ, խղճալով նորան վերառէց տարաւ իւր խուցը[4], կրակ վառէց և օձին տաքացրէց, և այնչափ խնամ[5] տարաւ մինչև օձն քիչ քիչ[6] իւր բնական[7] ուժը գտաւ։ Բայց օձի առաջին բանն էն ելաւ՝ որ վեր կացաւ իւր բարերարի[8] դէմ[9], և յառաջ գնաց որ նորան կծի և զահրի[10]։ Երկրագործն՝ շատ զարմանալով սորա ապերախտութեան[11] վերայ, ասէց. «Ո՛վ ապերախտ, դու այսպէ՞ս ես ճանաչում այդ երախտիք[12] որ քեզ արի. ես քո կեանքն[13] փրկեցի՝ և դու ուզումես ինձ կորցնել, չարագործ»։ Այս ասէց և փայտով տուէց մեռցրէց։

*Բարոյական.* Ապերախտ մարդն նման է օձի, և ինչ լաւութիւն որ նորան անես, շուտով կ՛մոռանայ և չար յետ կ՛հատուցանի[14]։

1. sneeuw. 2. bevroren. 3. halfdood. 4. vertrek; hut. 9. zorg. 6. langzamerhand. 7. natuurlyk. 8. weldoener. 9. tegen. 10. vergiftigen. 11. ondankbaarheid. 12. weldaad. 13. 't leven. 14. met kwaad vergelden.

## 48. ԷՇ ԵՒ ՁԻ

Մի օր մի էշ և մի ձի միասին ճանապարհ էին գնում. իշոյ բեռն շատ ծանր ենելով աղաչէց ձիոյն որ իւրն օգնի՝ և բեռնի մի մասն[1] ևս ինքն տանի՝ եթէ ուզում է նորա կեանքն խնայի։ Բայց ձին ամենևին[2] չուզէց այս օգնութիւն անել. վասն որոյ



էշն բեռնի ծանրութիւնից ընկաւ և մեռաւ։ Տէրն՝ որ այս տեսաւ, իշոյ կաշին քերթէց[3] և բոլոր բեռնի հետ միասին դրէց ձիոյ վերայ։ Այդ ժամանակում ձին սկսէց ողբալ[4]. «Ո՛վ թշուառութեանս[5], ես չուզեցի բեռնի մի մասն տանել, այժմ պարտաւորուեցի[6] ոչ միայն բոլոր բեռն՝ այլ և կաշին ևս միասին տանել»։

*Բարոյական.* Այս օրինակ է անողորմ[7] մարդոյ. որ ինչպէս ինքն ուրիշին չի ողորմալ[8], իւրնից ևս ողորմութիւն կ՛հեռանայ[9]. այս պատճառի համար անողորմ մարդն նման է գազանի[10] որ ուրշի վերայ գութ չունի։

1. een deel (gedeelte). 2. volstrekt. 3. villen. 4. bejammeren. 5. wee. myner ellende! 6. ik ben genoodzaakt. 7. onmedelydend; wreed. 8. medelyden hebben met. 9. zich verwyderen. 10. dier; wild dier.

## 49. ԱԳԱՀ[1] ԵՒ ԱՆՑԱՒՈՐ[2]

Մի ագահ մարդ իւր գանձ[3] թաղումէր[4] մի արտի[5] մէջ, բայց չկարողացաւ այդ այնպէս ծածկաբար[6] անել որ իւր դրացին[7] չտեսնի։ Վասն որոյ երբոր ագահն գնաց այդտեղից, դրացին եկաւ գանձըն հանէց վերառէց տարաւ։ Միւս օրն ագահն եկաւ որ իւր գանձին նայի[8], բայց ի՛նչ կսկիծ[9] ըզգաց[10] երբոր բացաւ և բան չ՛գտաւ այնտեղ. աշխարհ չէ կարող պատմել նորա արածը[11], այնչափ պոռաց և լացաւ մինչև յուսահատուէց[12]։ Մի անցաւոր՝ որ այս ձայն լսէց, վազէց եկաւ էն տեղ, «ի՛նչ ես կորցրել», հարցրէց նա, «որ այդպէս յուսահատուել ես»։ «Գանձս եմ կորցրել», պատասխանէց ագահն, «որ ինձ հազար անգամ աւելի սի-

րելի[13] էր քանի թէ իմ կեանքը»։ «Ընդէ՞ր քո տան մէջ չթաղեցիր», կրկնեց[14] միւսն, «որ երբոր ուզենայիր կարողէիր հեշտութեամբ հանել»։ «Հանե՞լ իմ ոսկին», պոռաց ագահն, «երբէք ես ձեռ չէի տալ[15]»։ Յետոյ միւսն ասէց. «Եթէ ձեռ չէիր տալ, ուրեմն[16] ինչո՞ւ համար ես ցաւում[17], քար դի՛ր գանձիդ տեղը այդ ևս միևնոյն բան կ'անի քո համար»։

Բարոյական. Մի փիլիսոփայ[18] ասումէր թէ՝ Ագահն բոլորից ողորմելի է[19], քանզի սիրտն և հոգին մաշումէ[20], այլ ամենևին չէ կարողանում վայելել[21]։

1. gierigaard. 2. voorbyganger. 3. sehat. 4. begroef. 5. veld. 6. heimelyk. 7. buurman. 8. nakyken. 9. angst. droefheid. 10. gevoelen; ondergaan. 11. handeling. 12. wanhopen. 13. dierbaar. 14. hermam. 15. ik zou nooit aanraken. 16. dan, toch. 17. betreuren. 18. wysgeer. 19. ellendigst. 20. verteeren. 21. genieten.

## 50. ԲԱՐԵԿԱՄՔ

Մի հարուստ մարդ առատասիրտ[1] ելնելով՝ միշտ իւր բարեկամներին պատիւ էր անում[2] և հանդէս[3] էր կատարում[4], որ գիշեր ցերեկ[5] նորա մօտից[6] չէին գնալ՝ և մեծ պատուով նորան բարև կ'տային[7]։ Մի օր հարուստն ուզէց այս բարեկամներին փորձել, թէ արդեօք[8] պէտք–եկած[9] ժամանակում օգնութիւն կ'հասանե՞ն[10] իւր հարկաւորութեան։ Վասն որոյ պատճառ բռնեց[11] թէ հակառակութիւն[12] ունի իւր թշնամեաց հետ, որ իւրն ուզումեն սպանեն. Նա աղաչէց իւր բարեկամներին այս նեղութեան մէջ իւրն օգնեն. Բայց տեսաւ որ բաց ի[13] երկու բարեկամներից մին չեկաւ։ Յետոյ նա ևս այս երկքին միայն իւրն բարեկամ պահէց, և միւսներին էլ չուզէց ճանաչել։



Բարոյական. Այս օրինակ է՝ թէ ճշմարիտ և սուտ բարեկամը ձախորդութեան[14] մէջ կ'յայտնուի[15]։ Աղեքսանդր թագաւորին հարցրին[16]. «Ո՞ւր է գանձդ»։ Նա ևս իւր բարեկամներն ցոյց տուէց։

1. goedgunstig, mild. 2. uitnoodigen. 3. feest. 4. vieren. 5. dag en nacht. 6. van zyn nabyheid. 7. groeten. 8. werkelyk. 9. noodwendige. 10. verleenen. 11. voorgeven. 12. twist. 13. behalve. 14. tegenspoed; ongeluk. 15. blyken. 16. men vroeg.

## 51. ԳՈՐՏՔ[1]

Գորտերն ամարան մէջ տեսան թէ իւրէնց ջրոտ տեղը մերձ էր ցամաքել[2] և սկսեցին պոռալ, «Որ տեղ պէտք է ուրեմն գնանք բնակուենք[3]»։ Նոցա միջից մի ձագ պատասխանէց. «Եկէ՛ք գնանք այս մօտիկ հորը, որոյ մէջ լի ջուր ելնելով մինչև բերանն[4], շատ հեշտութեամբ կարող ենք մտնել»։ «Շատ լաւ», ասէց նոցանից մի ծերն, «բայց երբոր ջուրն քաշանայ և մեք հորի տակ մնանք, որոյ խորութիւնն[5] քան ոտից յաւել է, ինչպէս ենք ապա[6] կարող այնպէս հեշտութեամբ դուրս գալ որպէս հեշտութեամբ մտանք»։

Բարոյական։ Խելացի[7] և փորձառեալ[8] մարդն միշտ ամէն բանի վերջն կ'մտածի. բայց անփորձ[9] մանուկն կ'անի ինչ որ իւր խելքումն գայ[10], և միշտ կ'սխալի։ Վասն որոյ մեք պէտք է միշտ ծերոց խորհուրդ հարցնենք՝ և նոցա խրատի համեմատ գործենք որ չ'սխալենք։

1. Kikvorschen. 2. uitdrogen. 3. wonen. 4. rand. 5. diepte. 6. dan. 7. verstandig. 8. ervaren. 9. onervaren. 10. hy goeddenkt.

## 52. ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐՔ

Մի մուշտակ-կարող[1] արջի[2] մորթի[3] յետնայ էր մանգալիս[4]: «Մի՛ վաստակել[5]», ասեցին նորան երկու ղրացիք. «մեք այժմ կ՚գնանք այս մերձակայ[6] անտառը[7] մի մեծ արջ կ՚սպանենք և կ՚բերենք»: Այսպէս խօսելով արջի մորթն ծախեցին և պարտական[8] ելան որ նորան յանձնեն[9] այն: Վասն որոյ գնացին անտառն. բայց երբ մտան անտառն իսկոյն մի մեծ արջ դուրս եկաւ իւր բնիցը և ուղղակի վազէց նոցա վերայ: Այս երկու կտրիճներ[10] իւրէնց առուտուրն[11] մոռացան, և ուրիշ բան չմտածեցին միայն թէ ազատուեն. մին վերելաւ ծառն, և միւսն, որ գիտէր թէ արջն մեռածի[12] հետ բան չունի, կշտու ընկաւ գետնի վերայ և շունչն բռնէց[13] մեռէլի պէս ելաւ: Արջն՝ որ եկաւ և նորան գետինն փռուած[14] տեսաւ, հոտ քաշելով այս կողմ և այն կողմ դարձրէց, մեռած համարելով[15] թողէց գնաց: Երբոր արջն երկարացաւ, միւս ընկերն ծառիցն քաշ եկաւ և ընկերին հարցրէց թէ «Արջն ի՛նչ ասէց ականջիդ». Նա ևս կիսամեռ պատասխանէց թէ, «Ասէց թէ ամենևին արջի մորթն չ՚ծախէք մինչև որ գետնի վերայ ընկած չելնի»:

Բարոյականն. Այս օրինակ է թէ մարդ[16] ամէն բանի վերջ պէտք է յառաջն մտածի և այնպէս անի:

1. bontwerker. 2. beer. 3. huid. 4. zocht. 5. doe geenemocite. 6. naburige. 7. bosch. 8. schuldig. 9. afleveren. 10. helden; dap pere lieden. 11. handel. 12. eene doode. 13. inhield. 14. uidgestrekt. 15. denkende. 16. men.



## 53. ԱՆՁՆԱՑՈՅՑ[1] ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՋԻԿ[2]

Մի պատուաւոր[3] խաթուն, որ քաղաքումն էր բնակւում, սովորաբար[4] կաթն և կարագ էր առնում մի լաւ յստակ հագած գիւղական աղջկանից, և խոստացաւ նորան թէ միանգամ կ՚գնայ նորան տեսութիւն անի[5] նորա գիւղում, որ մի թաս նոր-կթած[6] կաթն խմի: Գարնան[7] ժամանակում մի օր խաթունն իւր դստերաց[8] հետ իսկապէս գնաց այդ գիւղը: Բայց որքան զարմացաւ երբոր մտաւ այս աղջկան բնակութիւնն: Ամենայն ինչ խիստ եղտոտ էր, և հաւերն սեղանների վերայ և նստարանների[9] վերայ ման էին գալիս և ամենայն ինչ եղտոտացնում էին: Էստեղ և էնտեղ շորեր էին վէր ածած[10], և գետինն խիստ անմաքուր[11] էր և անկարգ[12], մինչև անգամ խոհանոցն[13] ևս: Խաթունն կաթն չ՚խմէց, և գնաց մի ուրիշ բնակութիւն՝ ուր թէպէտ յաւել խեղճ, բայց աղջկներն շատ մաքուր էին[14] և ամենայն ինչ կարգի տակում[15]. այստեղ խաթունն դըստերովն նստաւ կերաւ և շատ ուրախ էր, և ինչոր կերէլ էր արժէքն[16] տասն տակ աւելի հատուցրէց, և այսպէս ասէց: «Մի աղջիկ որ միշտ սենեակն և խոհանոցն մաքուր, յստակ և կարգին է պահում հարիւր անգամ յաւել գովելի[17] է քանթէ նա որ սիրուն պատուական հագուստ է հագանում»:

1. opgeschikte. 2. boerenmeisje. 3. aanzienlyke. 4. gewoonlyk. 5. bezoek brengen. 6. pas gemolken, versch. 7. lente. 8. dochters. 9. banken. 10. lagen. 11. vuil 12. in wanorde. 13. keuken. 14. zindelyk. 15. in goede orde. 16. waarde. 17. loffelyk; aanbevelend.

## 54. ԵՐԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՔ[1]։

Երկու հոգի[2] միասին ճանապարհ էին գնում. մին մի կացին[3] գտաւ, և ուրախանալով բոլորին ևս ասում էր, «կացին գտայ». բայց ինչ որ ընկերն խրատումէր որ չ'ասի «գտայ», այլ ասի, «գտանք», բայց միւսն միշտ միևնոյնն էր ասում։

Մի փոքր յառաջ գնացին յանկարծ տեսին որ կացինի տէրն վազելով գալիս էր նոցա յետնէն։ Այդ ժամանակում գտանողն[4] խօսքն փոխեց և ըսկսեց միւսին ասել թէ «կորանք[5] եղբայր»։ Նա ևս պատասխանեց թէ «ինչու համա՞ր ես ասում «կորանք», ասա «կորայ», վասն զի երբոր կացինն գտար՝ չէիր ասում, գտանք, ասում էիր գտայ։ Ուրեմն[6] ինչպէս չուզեցիր ինձ յաջողութեանդ[7] մասնակից[8] անել, չ'է հարկաւոր ձախորդութեանդ[9] ևս անես»։

Բարոյականն. Այս օրինակ է թէ ով որ յաջողութեան մէջ ուրշին բարի կ'անի՝ ձախորդութեան մէջ դէմն կ'գայ[10]։

1. reiziger. 2. personen. 3. lbyl. 4. vinder. 5. wy zyn verloren. 6. derhalve. 7. voorspoed. 8. deelgenoot. 9. tegenspoed. 10. tegenkomen.

## 55. ԿԵՐԱԿՈՒՐ[1] ՀՈԳՒՈՅ[2] ԵՒ ՄԱՐՄՆՈՅ[3] ՀԱՄԱՐ

Գուստավ և Լինա իւրենց ծնողաց հետ գնումէին մի մերձակայ[4] քաղաք տօնավաճառ[5] տեսնելոյ։ Գուստավ տգէտ չէր բայց բթամիտ[6] էր և որկրամոլ[7]։ — Լինա մի շատ խելօք աղջիկ էր, և մանաւանդ[8] կարդալոյ և սովորելոյ շատ սէր ունէր[9]։ Գուստավ ընդհակառակն[10] դպրոցումն բոլորից պակաս[11] յառաջադէմ[12] էր՝ և շատ փոքր էր սովորում։



Այս երկու մանկունք իւրենց ծնողքից փող գտան՝ որ իւրենց համար, ինչ ուզումէին անէին. Լինա իւր փողով մի սիրուն փոքրիկ գիրք առեց, որ նա ծիգ ժամանակ փափաքումէր ունենալ, մինչդեռ Գուստավ իւր փողն փճացրեց[13] քաղցրաւենիք[14] և ուրիշ ուտելիք[15] առնելով։

Երբ սոքա սեղանին էին, Գուստավ ասեց Լինային. «Հաւատա ինձ, քուրիկ, որ մի համեղ խորոված[16] աղի միս[17] իմ համար յաւել արժէք[18] ունի քանթէ մի շատ սիրուն գիրք»։ Լինա շատ յարմար[19] պատասխանեց. «Ամաչիր, եղբայր», ասեց նա, «այդպէս խօսելուց, քանզի շներն և կատուներն ևս միևնոյն կ'անէին՝ եթէ կարողանային»։ Բոլորն որ սեղանին էին ծափ տուեցին որ ցոյց տան[20], Լինայի խօսքն ինչպէս նոցա հաճելի էր[21]. և նորան շատ գովեցին[22], մինչդեռ անխելք և շատակեր[23] Գուստավի վարքն խիստ նախատեցին[24], և որքան որ նա սեղանին նստած էր, բոլորն ևս նորան անարգ աչօք[25] էին նայում[26]։

1. Voedsel. 2. ziel. 3 lichaam. 4. naburig. 5. kermis. 6. traag. 7. snoepachtig. 8. daarby. 9. houden van. 10. daarentegen. 11. 't minst. 12. gevorderd. 13. verkwistte. 14. gebakken. 15. snoeperyen. 16. gebraden. 17. Worst. 18. waarde. 19. gepast. 20. toonen. 21. bevielen. 22. pryzen. 23. vraatachtig. 24. laken; berispen. 25. met verachtlyke blikken. 26. aankyken.

## 56. ՓՐԵԴԵՐԻԿՈՍ Բ. Ի[1] ԱՆՁՆԱՊԱՀԱՊԵՏԻ[2] ԺԱՄԱՑՈՅՑՆ

Մի հնգապետ[3] փրեդերիկոսի անձնապահի[4], խիստ սնապարծ[5], բայց արի[6], ժամացոյց չ'ունենալով կրումէր մի շղթայ[7], որոյ հետ մի հրացանի գնտակ[8] էր կապած:

Թագաւորն, որ այս գիտէր, ասէց նորան մի օր կատակելով[9]. «Մի լսի՛ր, հնգապետ, դու երևի շատ խնայող[10] ես, որ կարողացել ես ժամացոյց առնել. իմ ժամացուցով վեց ժամն է, մի ինձ ասա՛, քանի ժամն է քոնովը»:

Հնգապետն, որ Թագաւորի միտքն[11] հասկացաւ, հրացանի գնտակն հանէց իւր բաճկոնի[12] գրպանիցն[13] և ասէց. «Տէր, իմ ժամացոյց ո՛չ հինգ և ո՛չ վեց ժամն է ցոյց տալման, բայց իւրաքանչիւր վայրկենում[14] այդ զգուշացնումէ[15] ինձ, թէ ես Ձեր վեհափառութեան[16] համար պէտք է մեռնեմ»: «Շատ լաւ, իմ բարեկամ», ասէց Թագաւորն, «ուրեմն յինք ա՛ռ այս ժամացոյց որ տեսնես թէ ո՛ր ժամում իմ համար կմեռնես»: Այս ասելով տուէց նորան իւր ժամացոյցը ադամանդներ[17] բան տուած վերէն[18]:

Բարոյականն. Այս օրինակ է ճշմարիտ հաւատարմութեան[19] որ, ուր և երբ որ ելնի, արժանի վարձըն կ'գտանի:

1. horloge. 2. hoofd van het lyfwacht. 3. korporaal. 4. lyfwacht. 5. ydel. 6. dapper. 7. ketting. 8. gewerkogel. 9. schertsend. 10. spaarzaam, zuinig. 14. bedoeling. 12. vest. 13. zak. 14. oogenblik. 15. waarschuwt. 16. Majesteit. 17. diamanten. 18. omzet met. 19. trouw, getrouwheid.



## 57. ԾԵՐ ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մի անզգամ[1] որդի իւր ծեր հօրը տանից դուրս արէց. Նա ևս գնաց հիւանդանոցումն[2] կշտու ընկաւ շատ խեղճութեամբ[3] ապրելով: Մի օր երբ որդին այդտեղով անցէր կենում՝ հայրն նորան կանչէց և աղաչէց՝ մի զոյգ[4] կապերտ[5], — որ իւր վաստակովն[6] առել էր—նորան տաքի[7]: Որդին ևս խղճալով տուէց իւր որդւոյն երկու կապերտն՝ տարքէց հօրն: Բայց ծերն մին յինք առէց, միւսն յետ տարքէց որդւոյն և այսպէս ասէց թոռան. «Հօրդ ասա՛ այս կապերտ լաւ պահի իւր համար. քանզի երբ ինքն ևս կ'գայ այս հիւանդանոցում կշտու ընկանելու, որպէս ես եմ, նորան այդ պէտք կ'գայ[7]»: Որդին երբ այս լսէց, իսկոյն զղջաց[8] իւր արածի[9] վերայ, և գնաց իւր ծեր հօրը շուտով տուն բերէց:

Բարոյականն. Ինչ որ զաւակն[10] իւր ծնողաց անի, այն ևս կ'գտանի, թէ բարի լինի և թէ չար: Սոկրատ[11] փիլիսոփայն[12] ասումէր. «Ձեր ծնողացն պատուէ՛ք[13], որ ձեր կենաց պատճառն[14] են»:

1. snood, ondeugend. 2. ziekenhuis. 3. rampzalig. 4. paar. 5. tapyt. 6. arbeid. 7. te pas komen. 8. berouwde. 9. han delwyze. 10. kroost. 11. Socrates. 12. wysgeer. 13. vereert. 14. oorzaak.

## 58. ԳԻՏՈՒՆ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Մի երկրագործ շատ տարիներով աշխատումէր[1] մի հարուստի մօտ, երբոր ժամանակն եկաւ որ նորա մօտից դուրս գնայ, իւր վարձն ուզէց[2]: Նա ևս պա-

տասխան տուէց. «Շատ լաւ, բայց դու ևս կերածիդ[3] փողն տո՛ւր, վասն զի ինչոր աշխատումէիր[4] ես քեզ երկու տակ[5] ուտացնումէի որ լաւ դատես[6]»: Ջկրնի[7] շատ վիճաբանութիւն անելոյ[8] գնացին դատաւորին մօտ: Երկրագործն ասումէր թէ. «Իրաւունք է[9] որ մշակն[10] կերակուր գտանի ուր որ նա կայ, և իր վարձից ևս չզրկուի[11]»: Բայց հարուստն կաշառքի[12] ուժով դատաւորին իր-կողմն-գձէց[13] որ այսպէս վճիռ[14] կտրէց[15]. «Եթէ որ կերածն աշխատանքից քիչ է՝ թո՛ղ հարստին պարտաւորի[16] որ հատուցանի, իսկ[17] թէ շատ է՝ որպէս հարուստն ասումէր, թո՛ղ երկրագործն աշխատելով հատուցանի»:

Խեղճն այս որ լսէց գլխին տալով վայեց թէ «Արդարութիւն[18] չկայ, խղճմտանք[19] մեռէլ է: Մի գիտուն մարդ սորան տեսնելով մխիթարէց[20] և ասէց. «Ինչո՞ւ համար ես լալիս, խիղճ մտանքը չէ մեռէլ, բայց միանգամայն համբարձուէլ է[21]. վասն զի եթէ մեռած ելնէր՝ գոնեա՛[22] մի ոսկորը[23] կ'մնայր»:

Բարոյականն. Այս օրինակ է թէ Արդարութիւն և խղճմտանք միշտ դժուար են գտանւում, թէպէտ բոլորն ուրշի մօտ են խնդրում[24], և իրէնց մօտ ամեննին չեն խնդրում:

1. werken, arbeiden. 2. vragen. 3. van wat gy gegeten hebt. 4. met arbeid verdienen. 5. dubbel. 6. verdienen. 7. na. 8. woordenwisseling. 9. billyk. 10. werkman. 11. niet beroofd zyn. 12. omkooping. 13. overhalen. 14. vonnis. 15. vellen. 16. nood zaken, dwingen. 17. doch. 18. rechtvaardigheid. 19. geweten. 20. troostte. 21. opgevaren, omhoog gegaan. 22. ten minste. 23. been. 24. zoeken.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ



## 50. ԷՇ ՀԻՒԱՆԴ

Մի էշ վտանգաւոր[1] հիւանդութեան մէջ էր. բայց երբոր սկսէց փոքր փոքր առողջանալ[2], ձայն տարածուէց[3] գայլերի և շների մէջ թէ էշն հոգեվար[4] է: Շներն շուտով վազելով եկան որ երբ մեռնի կաշին իսկոյն յափշտակեն[5]: Երբոր անհամբերութեամբ[6] սպասումէին թէ ինչ ձայն[7] կայ և իշոյ տան դրան ծակումն ներս էին ակնում, իշոյ ձագին էնտեղ տեսին, կանչեցին նորան այս բարեկամները. «Որդեա՛կ[8]», ասեցին, «աղաչումենք[9] մեզ իմացրու[10] ինչպէս է մայրդ. դու գիտես որ մեք շատ ցաւումենք[11] նորա համար»: Բայց ձագն պատասխանէց խստութեամբ. «Շատ լաւ է, ձեր չ'ուզածիցն աւելի[13]»:

Բարոյականն. Որկրամոլ[14] անշահ[15] մարդիկ միշտ ջանանումեն որ իրէնց փորը կշտանայ[16], և ուրշին ինչ կ'ելնի կամ չի ելնել ամեննին փոյթ չ'ունեն[17]: Մի փիլիսոփայ ասումէ թէ, «մարդ ծնած է մարդոյ օգնելոյ համար»:

1. gevaarlyk. 2. herstellen. 3. er liep gerucht rond. 4. stervende. 5. grypen, rooven. 6. ongeduldig. 7. nieuws. 8. kindje. 9. verzoeke; wees zoo goed. 10. doen weten, vertellen. 11. betreuren; medelyden hebben. 12. barsch. 13. meer dan wat gy niet verlangt. 14. gulzig. 15. valsch. 16. verzadigd zyn. 17. niets bekommerd zyn.

## 60. ՄԱՐԴ ԵՒ ԳԱՆՁ

*Մի խիստ հարուստ մարդ ճանապարհի վերայ գանձ գտաւ բայց այնչափ մեծութեան[1] մէջ էր որ ամենևին չէր երևակայում[2] թէ օր կ'գայ որ կարօտ կ'ելնի[3] այն գանձին որ գտել էր. այս պատճառաւ և իւրն արժանի[4] չ'համարեց[5] որ կռանայ[6] գետնիցն գանձն վերառնի, վասն որոյ թողեց անձկացաւ: Մի ժամանակ անցկացաւ սորա նաւը շատ թանկագին[7] ապրանքով[8] բարձած ընկղմեց[9], և մի վաճառական սնանկացաւ[10] և սորան շատ վնաս տուեց[11]: Յետոյ տունն կրակ ընկաւ[12] բոլոր բանովն մոխիր[13] շինեց: Մի դատաստանի[14] մէջ իրաւունքն կորցրեց[15] և շատ բաներ ձեռնիցն ելան[16], մինչև այս բաներով մարդն աղքատացաւ: Այդ ժամանակում միտն եկաւ[17] գանձն՝ որ թողել էր անցէր կացել, և շուտով գնաց էնտեղ որ վերառնի. բայց շատ յետի. քանզի երբոր յառաջ էդտեղից մի քանի քայլ[18] հեռացել էր[19], մի փողի կարօտ մարդ էդտեղով անցկալով գանձն տեսել էր և վեր էր առել:*

*Բարոյական. Այս օրինակ է՝ թէ հարուստ մարդիկ կարծումեն որ նոքա միշտ էդպէս կ'մնան, և ապագայն[20] երբէք չեն մտածում:*

1. overgloedeid; rykdom. 2. zich voorstellen verbeelden. 3. behoefte hebben. 4. zyner waardig. 5. achten. 6. bukken. 7. kostbaar. 8. geederen, koopwaren. 9. verging. 10. ging bankroet. 11. schade aandeed. 12. vuur vatten. 13. asch. 14. geding. 15. verloor zyn recht. 16. uit de hand vielen; verloor. 17. dacht aan. 18. schreden. 19. verwyderd was. 20, de toekomst.



## 61. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ[1]

*Մի օր աղուէսն արագլին հրաւիրեց[2] ասելով. «Հրամեցէ՛ք[3] իմ տուն կերակուր ուտելոյ, փափագումեմ քեզ լաւ հացկերոյթ[4] տալ»: Արագիլն չըներհակեց[5], սիրով[6] ընդունեց պատիւն[7], և խօսք տուած[8] ժամին գնաց: Բայց պատիւն շատ քաղաքավար[9] ելաւ և հացկերոյթն անքաղաքավար. վասն զի բոլոր կերակրներն որ յանդիման եկան կաթնից շինած ջրի[10] ապուր[11] էին, տափակ[12] ամանների մէջ ածած. այնպէս որ արագլին սեղանի վերայ բան չ'կարողացաւ անել, բայց թէ կտուցն միայն կերակրի մէջ տալ, որ հազիւ թէ կեր՝ կրի համն տեսաւ[13]: Բայց աղուէսն բոլորն լափելով[14] բան չթողեց. և ուրախանում էր տեսնելով որ արագիլն խիստ բարկացած էր բայց չէր յայտնում[15]. քանզի[16] աւելի նեղացած[17] էր քանթէ դուզն:*

*Այս ուրախութիւն ձիք չ'տուեց[18], քանզի այդ օրը արագիլն ևս աղուէսին հրաւիրեց կերակուր ուտելու. և նորա յառաջ հանեց մի աման ձիգ և նեղ վզով, և մէջն կտրատած[19] միս լցած. ինքն հեշտութեամբ կտցովն կերաւ և խաբող[20] աղուէսի վերայ ծիծաղեց, որ չ'կարողանալով մի բան ուտել ամաչելով և դուզն հացկերոյթից գնաց:*

*Բարոյական. Այս օրինակ է խաբեբայ[21] մարդոյ որ միշտ ջանանումէ ուրշին խաբել. բայց չգիտէ թէ ինչոր անի, փոխարէնն կ'ըգտանի[22]:*

1. ooievaar. 2. uitnoodigde. 3. kom. alsjeblieft. 4. gastmaal, smulparty, 5. had er nie op tegen. 6. vriendelyk. 7. uitnoodiging. 8, afgesproken. 9. beleefd. 10. watserachtig. 11. pap. 13. had de smaa kvan. 14. likken.

15. laten blyken. 16. omdat. 17. geraakt. 18. duur niet. 19. in stukken gesneden. 20. valsch. 21. bedrieg lyk. 22. krygen.

Վ Ե Ր Ջ

2491